Քրիստոնյա Հայաստան

2020, ՕԳՈՍՏՈՍ Բ, ԹԻՎ 16 (564)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Արմավիրի թեմի քահանաներին

Օգոստոսի 12-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում ընդունեց Արմավիրի թեմում սպասավորող քահանաներին՝ գլխավորությամբ Արմավիրի թեմի առաջնորդ Սիոն արք. Ադամյանի:

Հանդիպումն սկսվեց Տերունական աղոթքով, որից հետո սրբազան հայրը, հայցելով Նորին Սրբության օրհնությունը, իր ուրախությունը հայտնեց Մայր Աթոռ կատարած այցի առիթով: Սիոն սրբազանն իր խոսքում հաստատեց, որ թեմի հոգեւորականաց դասը համավարակի դժվարին պայմաններում շարունակում է իրականացնել իր հոգեխնամ առաքելությունը: Սրբազանը նաեւ իր խորին երախտագիտությունն արտահայտեց Հայոց Հովվապետին՝ համավարակի պայմաններում թեմի սոցիալապես անապահով ընտանիքներին ցուցաբերած նյութական աջակցության համար:

Հանդիպմանը Հանրակրթության պետական չափորոշչի եւ առարկայական չափորոշիչների, դրանցում առկա խնդիրների, մարտահրավերների եւ արտահայտված մտահոգությունների մասին զեկույց ներկայացրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանը՝ մեկ անգամ եւս հաստատելով Մայր Աթոռի դիրքորոշումներն այս հարցերի վերաբերյալ: Հայր սուրբը շեշտեց, որ կրթական բարեփոխումները պետք է միտված լինեն ազգային ինքնությամբ, հոգեւոր-ազգային արժեհամակարգով, բարոյական նկարագրով եւ ժամանակակից մարտահրավերներին համահունչ քաղաքացու կերտմանը՝ ի շահ հայոց պետության զորացման եւ շարունակականության: Հայր Զաքարիան մասնավոր անդրադարձ կատարեց նաեւ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկային՝ նշելով, որ անընդունելի է առարկայի՝ որպես առանձին բաղադրիչի դուրս բերումը հանրակրթական դպրոցից:

Զեկույցի վերաբերյալ տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը նույնպես պատասխանեց քահանաների հարցերին՝ հույժ կարեւոր նկատելով հոգեւորականության դերակատարությունը քրիստոնեական եւ ազգային արժեհամակարգի կերտման ու պահպանման գործում:

Այնուհետեւ «եկեղեցու սոցիալական ծառայության դերը հովվական առաքելության մեջ» թեմայով բանախոսեց Մայր Աթոռի սոցիալական ծառայության կենտրոնի տնօրեն Մարկոս քհն. Մանգասարյանը՝ ներկայացնելով նաեւ համավարակի պայմաններում Մայր Աթոռի կողմից իրականացված սոցիալական միջոցառումները:

Բանախոսությանը հաջորդած քննարկումների ընթացքում կարեւորվեց հոգեւորականների կողմից սոցիալական ծառայության իրականացումը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

Վերջում Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Հայրապետն իր գնահատանքն ու հայրական օրհնությունը բերեց Արմավիրի թեմի քահանայից դասին՝ իրենց նվիրյալ ծառայությունը հանձնառությամբ եւ պատասխանատվությամբ իրականացնելու համար: Նորին Սրբությունն ընդգծեց, որ յուրաքանչյուր հոգեւորական պատասխանատվություն է կրում երկրի անվտանգության, ժողովրդի կրթության, բարօրության, առաջընթացի եւ պետության զորացման գործում: Հայոց Հովվապետը հորդորեց եկեղեցականներին իրենց առաքելության մեջ լինել քաջ, համարձակ, համբերատար եւ նախանձախնդրությամբ պաշտպանել հոգեւոր ու ազգային արժեքները:

Հանդիպումը եզրափակվեց Պահպանիչ աղոթքով:

Առաջիկայում եւս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում նախատեսվում են նմանօրինակ հանդիպումներ հայաստանյան թեմերի հոգեւորականաց դասի հետ:

Արագածոտնի թեմի քահանաներին

Օգոստոսի 14-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արագածոտնի թեմի քահանայից դասին՝ առաջնորդությամբ Արագածոտնի թեմի առաջնորդ Մկրտիչ եպս Պռոշյանի:

Տերունական աղոթքից հետո «Հայաստանի կրոնական փոքրամասնությունների առանձնահատկությունները» թեմայով բանախոսեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Շահե ծ. վրդ. Անանյանը: Հայր սուրբը ներկայացրեց Հայաստանում գործող կրոնական կազմակերպությունների գործունեությունը եւ դրանց նկատմամբ Մայր Աթոռի որդեգրած մոտեցումները: Քննարկումների ընթացքում հայր Շահեն անդրադարձավ նաեւ Հայ Եկեղեցու եւ ավանդական մյուս Եկեղեցիների միջեւ ձեւավորված միջկրոնական, ծիսական փոխհարաբերություններին ու առկա խնդիրներին:

Այնուհետեւ հանդիպմանը հանրակրթության պետական չափորոշչի եւ առարկայական չափորոշիչների, դրանցում առկա խնդիրների, մարտահրավերների եւ արտահայտված մտահոգությունների մասին զեկույց ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանը՝ մեկ անգամ եւս հաստատելով Մայր Աթոռի դիրքորոշումներն այս հարցերի վերաբերյալ: Հայր Զաքարիան մասնավոր անդրադարձ կատարեց նաեւ «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկային՝ նշելով, որ անընդունելի է առարկայի՝ որպես առանձին բաղադրիչի դուրս բերումը հանրակրթական դպրոցից:

Զեկույցից հետո տեղի ունեցած քննարկումների ժամանակ Նորին Սրբությունը, պատասխանելով քահանաների հարցերին, կարեւոր համարեց Եկեղեցու եւ հոգեւորականների դերակատարությունը սերունդների կրթադաստիարակչական գործում՝ ընդգծելով յուրաքանչյուր հոգեւորականի անշահախնդիր ծառայության կարեւորությունը համայնքներում:

Իրենց հերթին քահանա հայրերը Հայոց Հայրապետին տեղեկություններ փոխանցեցին իրենց համայնքներում ծավալած գործունեության եւ իրականացվող ծրագրերի մասին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց թեմի քահանայից դասին՝ իրենց հովվական ծառայությունն անմնացորդ նվիրումով իրականացնելու համար: Վեհափառ Հայրապետը կարեւորեց ծխական համայնքների ձեւավորումը՝ ի նպաստ հոգեւոր կյանքի առավել զարգացման ու Եկեղեցու առաքելության առավել արդյունավորման: Նորին Սրբությունը նաեւ իր գնահատանքը փոխանցեց Մկրտիչ սրբազանին՝ թեմի հոգեւոր կյանքի առաջընթացին ուղղված ջանադիր աշխատանքի ու անսպառ եռանդի համար:

Հայոց Հովվապետը եկեղեցականներին հորդորեց նույն ջանասիրությամբ ու նախանձախնդրությամբ շարունակել իրենց ծառայությունը հանուն հայ ժողովրդի բարօրության եւ հայրենի երկրի պայծառացման ու զորացման:

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Օգոստոսի 11-ին եւ 13-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով:

Մինչ ժողովի օրակարգային հարցերի քննարկումը ժողովականներն իրենց աղոթքը բարձրացրեցին Լիբանանում պայթյունի հետեւանքով զոհված անձանց, այդ թվում եւ հայորդիների համար՝ վշտակցություն հայտնելով նրանց հարազատներին, զորակցություն՝ Լիբանանի ժողովրդին: Այս կապակցությամբ տեղեկացվեց, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մշտական կապի մեջ է եղել Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի հետ՝ տեղեկանալու տիրող իրավիճակին եւ հայ համայնքում առկա կարիքներին: Ի զորակցություն տեղի հայ համայնքի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությանը փոխանցվել է 100.000 ԱՄՆ դոլար:

Ժողովի օրակարգում ընդգրկված էին Եկեղեցու թեմական, կրթական, սոցիալական եւ եկեղեցաշինական ծրագրերին վերաբերող, հայրենական-ազգային կյանքի զանազան խնդիրներին առնչվող հարցեր: Ժողովի նիստերն ատենապետեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը:

Գերագույն հոգեւոր խորհուրդն անդրադարձ կատարեց հուլիս ամսին Տավուշի մարզում՝ հայ-ադրբեջանական սահմանին ծավալված ռազմական գործողություններին, դրանց հետեւանքով սահմանամերձ

բնակավայրերին հասցված վնասներին, ինչպես նաեւ այս կապակցությամբ տարբեր երկրներում հայ եւ ադրբեջանական համայնքների միջեւ տեղի ունեցած բախումներին: Այս մասին զեկույց ներկայացրեց Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ եպս Գալստանյանը: Սրբազանը տեղեկացրեց այդ օրերին թեմի հոգեւոր դասի մատուցած ծառայությունների մասին՝ երախտագիտությամբ արձանագրելով այդ օրերին Հայոց Հովվապետի մշտական հոգածությունը եւ ուշադրությունը: Առաջնորդը նաեւ ներկայացրեց ռազմական բախումների հետեւանքով բնակչության շրջանում առաջացած կենցաղային եւ նյութական խնդիրները, ինչպես նաեւ դրանց լուծմանն ուղղված ծրագրերը:

Ժողովը դատապարտեց Ադրբեջանի զինված ուժերի կողմից Հայաստանի Հանրապետության հանդեպ սանձազերծված պատերազմական սադրիչ գործողությունները՝ կարեւորելով այս առնչությամբ միջազգային հանրության գնահատականները եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների ջանքերը:

Ամենայն Հայոց Հայրապետն իր գնահատանքը փոխանցեց թեմակալ առաջնորդին եւ թեմի հոգեւորականաց դասին՝ ջանադիր ծառայությամբ հայոց բանակին եւ սահմանամերձ համայնքների ազգաբնակչությանը զորավիգ եւ նեցուկ լինելու համար: ԳՀԽ անդամները եւս գոհունակություն հայտնեցին այդ ժամանակահատվածում թե՛ Տավուշում եւ թե՛ Սփյուռքի տարբեր համայնքներում հայ եկեղեցականների իրականացրած կարեւոր առաքելության առնչությամբ:

Մասնավոր քննության առարկա դարձան Վիրահայոց թեմի Ջավախքի շրջանում հայ համայնքում վերջին օրերին տեղ գտած անցանկալի զարգացումները: ԳՀԽ անդամները ցավ հայտնեցին կատարվածի առնչությամբ՝ կոչ անելով ջավախահայությանը պահպանել միասնության ոգին: Ընդգծվեց Ջավախքի փոխառաջնորդության հոգեւոր դասի հետեւողական ջանքերի անհրաժեշտությունը՝ ի խնդիր համայնքում համերաշխության եւ խաղաղության վերականգնման:

Գերագույն հոգեւոր խորհուրդն անդրադարձ կատարեց նաեւ ԿԳՄՍ նախարարության կողմից հրապարակված հանրակրթության պետական չափորոշչի եւ հանրակրթական պետական առարկայական չափորոշիչների նախագծերի շուրջ արտահայտված հանրային բազմաբնույթ մտահոգություններին:

Նյութի առնչությամբ զեկույց ներկայացրեց Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերություններին առնչվող հարցերով աշխատանքային խմբի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կրթական հարցերով ենթախմբի ատենապետ Միքայել արք. Աջապահյանը:

Շարունակությունը՝ էջ 3

Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Օգոստոսի 16-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Տիրամոր՝ Սուրբ Մարիամ Աստվածածնի Վերափոխման տոնը: Բերկրառատ օրվա առիթով



Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Սուրբ Տրդատի բաց խորանին մատուցվեց Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը:

Սրբազան արարողությանը ներկա էին Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթեւոսյանը եւ Էջմիածնի քաղաքապետ Դիանա Գասպարյանը:

Պատարագիչ սրբազանը, ներկայացնելով տոնի խորհուրդը, ընդգծեց, որ դեռատի օրիորդ Մարիամն իր կամքը հնազանդեցրեց Տիրոջ հորդորին, եւ երբ ժամանակը եկավ, դարձավ Աստվածամայր, լույս աշխարհ բերեց մարդկության Փրկչին՝ կրելով բոլոր դժվարությունները, եւ յոթ վերքերը չսպիացած՝ ապրեց մեր փրկության համար իր Զավակի խաչ բարձրանալու առաքելության գիտակցումով:

«Մարդկային կյանքը գեղեցկանում եւ իմաստ է ստանում հիշողություններով՝ բարի, արժանավայել կյանքի եւ գործերի մասին վերապրումով: Աստվածապարգեւ կյանքը երկրային բարիքների վայելքը չէ միայն, այլ դրանք ստեղծելու եւ բացառապես ի բարիս գործածելու կարողությունն ու կամքը: Աստծու առաջ ամենքս հավասար ենք, սակայն տարբեր է մեր առաքելությունը՝ ուսուցանել, քարոզել, ստեղծել, կռվել, բժշկել, ղեկավարել, որից չպետք է շեղվենք՝ գայթակղվելով փառասիրությամբ, հպարտությամբ, արծաթասիրությամբ: Մաքո՛ւր պահենք մեր սրտերը եւ մեր աղոթքները, խնդրանքներն ու հայցվածները Նրան ուղղելիս չփորձենք «զմտաւ ածել», որ առավելության դույզն-ինչ հնարավորություն ունենք: Խոնարհենք մեր հայացքը՝ մտքի աչքերն առ Աստված ուղղելով: Հնազանդեցնենք մեր կամքը՝ բարին, օգտակարը, ճշմարիտը կատարելու եւ լավը դառնալու հաստատուն համոզումով»,– ասաց Մուշեղ եպիսկոպոսը՝ հաստատելով, որ զորությունների Տերը՝ Արարիչն ամենայն շնչավորների ու անշունչների, խաղաղ սրտի իղձերին կյանք

նշանակության մասին՝ ի մասնավորի ամրագրելով. «Մենք՝ քրիստոնյաներս, որպես տարվա բերքի խորհրդանիշ, օրհնելու նպատակով ընտրեցինք խաղողը, քանի որ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, խաղողի որթը պատվեց՝ հայտարարելով, թե «Ես եմ ճշմարիտ որթատունկը» (Հովհաննես ԺԵ 1): Այդ որթատունկի պտղի՝ խաղողի հյութն էր, որ Հիսուս օրհնեց «որպես Նոր Ուխտի» Իր արյուն (Մատթ. ԻԶ 28), որով մենք գնվեցինք ու ազատվեցինք մեղքերի ծառայությունից ու մահից եւ նոր կյանք ստացանք»:

Վերջում Մուշեղ սրբազանը հորդորեց ամենքին ապրել սուրբ Աստվածածնի բարեխոսությամբ ու հայցվածով, շարունակել հավատալ եւ հուսալ, սիրել հայրենի երկիրն ու մեկս մեկու եւ խնդրել՝ «Փառավորյալ եւ օրհնյալ միշտ Սուրբ Կույս Աստվածածին Մարիամ՝ մայր Քրիստոսի, մատուցիր մեր աղաչանքները քո Որդուն եւ մեր Աստծուն»:

Հավարտ Պատարագի, հանդիսապետությամբ Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Հայրապետի, Սուրբ Տրդատի բաց խորանին կատարվեց «Խաղողօրհնեքի» հանդիսավոր կարգը:

Օրհնված խաղողի ողկույզները բաժանվեցին հավատավոր ժողովրդին:

Լուսավորչահիմն Մայր Աթոռի 125-րդ գահակալը

Նվիրվում է Խրիմյան Հայրիկի ծննդյան 200-ամյակին


Գործ՝ Վ. Սուրենյանցի

Սկիզբը՝ թիվ 15

1868 թ. հոկտեմբերի 20-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսը Խրիմյան Հայրիկին ձեռնադրում եւ օծում է եպիսկոպոս: Անսահման ակնածանք վայելող եւ սիրված Հայոց Հայրիկը 1869 թ. սեպտեմբերի 4-ին ընտրվում է Կ. Պոլսի հայոց պատրիարք: Խրիմյանի պատրիարքության քառամյա ժամանակաշրջանը թեժ պայքարի տարիներ էին: Հենց այդ շրջանի հայանպաստ գործունեության դրսեւորում էր նրա ծավալած պայքարը Պողոս եպիսկոպոս Մելիքյանի դեմ, որը դեռեւս 1860-ականներից կեղեքում էր ժողովրդին: Իր արժանավոր սան Գարեգին Սրվանձտյանցի միջոցով պատրիարք Խրիմյանին հաջողվում է «պողոսյան–ապողոսյան» պայքարը հասցնել ընդդիմադիր «ապողոսյանների» համար հաղթական ավարտի եւ Բ. Դռան թաքրիրով (կառավարական ծանուցագիր) 1872 թ. նրան հեռացնել Վասպուրականի հոգեւոր առաջնորդի պաշտոնից: Պատրիարքական շրջանի Խրիմյանի ամենակարեւոր գործը եղավ գավառական հարստահարություններն ուսումնասիրող հանձնաժողովի ստեղծումը 1870 թ. նոյեմբերի 27-ին: «Հանձնախումբը» բաղկացած էր 9 անդամից. չորսը՝ հոգեւորական, հինգը՝ աշխարհական: Հանձնախմբի նախագահը Ներսես Վարժապետյանն էր: Պատրիարքի հատուկ շրջաբերականով հանձնախումբն օժտվեց լիազորություններով, կապ հաստատեց գավառների հետ՝ իրավիճակի ճշգրիտ պատկերը ներկայացնելու համար: 1872 թ. ապրիլի 12-ին գավառական հարստահարությունների տեղեկագիրը հանձնվեց Բ. Դռանը: Դա, փաստորեն, Հայկական հարցի սկզբնավորման նախնական փուլն էր, որը սերտ առնչվում էր նրա երկու գլխավոր գործիչների՝ Մկրտիչ Խրիմյանի եւ Ներսես Վարժապետյանի հետ: Ազգային սահմանադրության վերաքննության համար ծավալված անպտուղ վեճերը, էֆենդիական դասի դիմակայությունը ստիպեցին պատրիարքին 1873 թ. օգոստոսին հրաժարական ներկայացնել Ազգային ժողովին: Դա ժողովրդական ուժերի պարտությունն էր: 1873 թ. պատրիարք Խրիմյանը հանդես եկավ հրաժարական ճառով («Խօսք հրաժարման Խրիմեան Ս. պատրիարքի հայոց յատենի երեսփոխանական ժողովոյ ի ԿԴ-երորդ նիստի յ3 օգոստոս, 1873»)՝ գրելով, որ իր հրաժարման պատճառը թախիծն ու հուսահատությունն են. ինքը եկավ գործելու համար, բայց ոչինչ չկարողացավ անել:

Հրաժարված պատրիարքը որոշ ժամանակ ապրեց Կ. Պոլսում: Թվում էր, թե Խրիմյանը հեռացել էր ազգային-հասարակական գործունեության ասպարեզից եւ Գուզկունճուք թաղամասի իր բնակարանում «լուռ ու մունջ» զբաղվում էր գրական գործունեությամբ: Բայց դա սոսկ երեւութական էր: Անհանգիստ Խրիմյանն ակնդետ հետեւում էր Ազգային ժողովի նիստերին եւ կայսրության մեջ խմորվող իրադարձություններին:

1876 թ. դեկտեմբերի 1-ին, նախօրոք մշակված սադրանքով, հրկիզվեց Վանի վաճառաշահ շուկան՝ ավելի քան 500 խանութներով, որոնց տերերը հայեր էին: Մի գիշերվա ընթացքում շեն ու աշխույժ շուկան ոչնչացավ: Հրդեհի կիսատ թողած գործն ավարտեցին թուրք ու քուրդ խաժամուժը, ոստիկաններն ու զինվորները: Հարազատ քաղաքի ողբերգության լուրը ցնցեց Խրիմյանին: Մի ամիս չանցած՝ հոգեկան ծանր խռովքից ժայթքեց Խրիմյանի հոգու հրաբուխը, լույս տեսավ «Վանգոյժ»-ը՝ ողբի, բողոքի ու ցասման ուժգին արտահայտությունը: Խրիմյանը մեղադրում էր իր հայրենակիցներին չափից ավելի հնազանդ լինելու մեջ:

«Վանգոյժ»-ի տրամաբանական շարունակությունը եղավ «Հայգոյժ»-ը, որն արձագանքն էր 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Շեյխ Ջալալեդդինի կողմից Ալաշկերտի դաշտի հայ բնակչության սահմռկեցուցիչ կոտորածների: Անմռունչ մորթվելու փոխարեն Խրիմյանը պահանջում էր ձեռք բերել «խեթկիչ եղջյուր» եւ ցուլի նման ոգորել բռնակալների դեմ: Ազգային ինքնագիտակցության եւ մարդկային արժանապատվության կոչ էր հնչեցնում հեղինակը, ահազանգում, պայքարի կոչում ժողովրդին. «Մեր նախնի քաջեր եկեղեցւո եւ Հայրենեաց ազատութիւն մահով եւ արիւնով գնեցին: Միթէ դու ցանկալի ազատութիւն առանց զոհի եւ արեան՝ ձրի՞ ստանալ կուզես»:

1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում ռուսական զորքերի հաղթանակը նոր հույսեր է արթնացնում հայության սրտերում: Խրիմյանի նախաձեռնությամբ Կ. Պոլսի բարձրաստիճան հոգեւորականությունը դիմում է Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանին՝ ռուսական դիվանագիտական եւ ռազմական ղեկավար գործիչների հետ Հայկական հարցը քննարկելու խնդրանքով: Խրիմյանին է վերապահվում Բեռլինի վեհաժողովում արեւմտահայության ինքնավարության ծրագիրը մեծ տերություններին ներկայացնելու գործը: 1878 թ. մարտից հայկական պատվիրակության ղեկավար Խրիմյանը թարգմանիչ եւ քարտուղար Մինաս Չերազի հետ այցելում է եվրոպական մեծ տերությունների արտաքին գործոց նախարարներին, բազմաթիվ հանդիպումներ ունենում տարաստիճան գործիչների հետ, նրանց ներկայացնում հայ ժողովրդի ծանր կացությունը եւ առաջարկներն ու պահանջները:

1893 թ., սեպտեմբերի 26, Խրիմյան Հայրիկի օծումը

Շարունակությունը՝ էջ 6

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Սկիզբը՝ էջ 2

Սրբազանն արձանագրեց, որ հակառակ ԿԳՄՍ նախարարության հետ ձեռք բերված նախնական պայմանավորվածությունների՝ Հայոց Եկեղեցին գործնականում որեւէ կերպ չի ընդգրկվել չափորոշիչների մշակման գործընթացում: Ավելին՝ հրապարակված չափորոշիչներում նվազեցված են հայագիտական առարկաների դասաժամերը, թույլ են տրված բովանդակային աղճատումներ եւ ժամանակագրական սխալներ: Չնայած բազմաթիվ հավաստիացումների ու պնդումների՝ տարրալուծման ճանապարհով դուրս է բերվել «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի գերակշիռ մասը:

Տեղեկացվեց, որ հանրակրթության պետական չափորոշչի վերաբերյալ առկա մտահոգությունները ենթախմբի կողմից 2020 թվականի հուլիսի 10-ի թվակիր նամակով փոխանցվել են ԿԳՄՍ նախարարությանը, որը, սակայն, առ այսօր մնացել է անպատասխան:

Գերագույն հոգեւոր խորհուրդը, իր համամտությունը հայտնելով չափորոշիչների նախագծերի վերաբերյալ Մայր Աթոռի կրթական հարցերով ենթախմբի արտահայտած դիրքորոշումներին, մտահոգություն հայտնեց ԿԳՄՍ նախարարության լիազոր մարմինների հետ գործակցության եւ կառուցողական երկխոսության բացակայության առնչությամբ: ԳՀԽ անդամներն արձանագրեցին, որ հիշյալ գործընթացի վերջնարդյունքի պատասխանատվությունը սոսկ պետական մարմիններինը չէ, նաեւ համազգային բոլոր կառույցներինն ու հաստատություններինն է, քանի որ կրթական բարեփոխումները պետք է միտված լինեն ազգային ինքնությամբ, հոգեւոր-ազգային արժեհամակարգը կրող քաղաքացու կերտմանը:

Ժողովին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգեւոր-կրթական հաստատությունների ուսումնական գործընթացների մասին զեկույց ներկայացրեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Մեսրոպ վրդ. Պարսամյանը:

Մասնավորապես քննարկվեցին հոգեւոր-կրթական բարձրագույն հաստատությունների ուսումնական ծրագրերը՝ միտված ժամանակի պահանջներին համահունչ հոգեւորականների նոր սերնդի կրթությանն ու դաստիարակությանը: Գերագույն հոգեւոր խորհուրդը կարեւորեց ապագա եկեղեցականների պատշաճ պատրաստությանն ուղղված ջանքերը՝ ընդգծելով, որ եկեղեցու առաքելության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է իր կրթական հաստատությունների պարգեւած հունձքով:

Գերագույն հոգեւոր խորհուրդը նաեւ զեկույց լսեց Մայր տաճարի նորոգության ընթացքի վերաբերյալ: Մուշեղ եպս Բաբայանը ժողովականների ուշադրությանը ներկայացրեց կատարված աշխատանքները եւ առկա դժվարությունները: Նշվեց, որ համավարակի տնտեսական ծանր հետեւանքների պատճառով դանդաղել է նաեւ Մայր տաճարի նորոգության համար հայրենիքում եւ սփյուռքում կազմակերպված համազգային հանգանակությունը:

Կարեւոր համարվեց, որ ջանքեր ներդրվեն Մայր տաճարի հիմնանորոգության աշխատանքները 2021 թվականին ավարտին հասցնելու համար:

ԳՀԽ անդամները գոհունակությամբ ընդունեցին ներկայացված զեկույցը՝ իրենց գնահատանքը հայտնելով աստվածահաճո այս առաքելությանն իրենց նպաստը բերած բոլոր բարեսեր անհատներին ու հաստատություններին:

Եկեղեցական կյանքի բարեկարգության հարցերի, մասնավորաբար՝ Եկեղեցու անդամների կողմից հակաեկեղեցական գործողությունների շրջանակում կարգապահական կանոնների գործարկման մասին զեկույցով հանդես եկավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Շահե ծ. վրդ. Անանյանը: Հայր սուրբը համապարփակ անդրադարձ կատարեց Հայոց Եկեղեցու կանոններին, որոնք առնչվում են եկեղեցական, կարգապահական, դավանաբանական հարցերին եւ կարգավորում ներեկեղեցական կյանքը:

Քննարկումների արդյունքում որոշվեց ստեղծել հանձնախումբ՝ Եկեղեցու կանոնական եւ կարգապահական խնդիրներին առնչվող փաստաթղթի ստեղծման առաքելությամբ:

Համավարակի ընթացքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ թեմերի կողմից հայրենիքում եւ սփյուռքի համայնքներում իրականացված սոցիալական աջակցության լայնածավալ ծրագրերի մասին զեկույց ներկայացրեց Մայր Աթոռի սոցիալական ծառայությունների գրասենյակի տնօրեն Մարկոս քհն. Մանգասարյանը: Տեղեկացվեց, որ համավարակի հետեւանքների հաղթահարմանն ի նպաստ առ այսօր Մայր Աթոռի կողմից նախաձեռնված սոցիալական աջակցության, առողջապահական եւ կրթական ծրագրերի արժեքային համագումարը կազմել է 494 183 292 ՀՀ դրամ: Հայաստանում եւ Արցախում պարենային սննդի բաշխման ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել 69 724 անձի:

Ժողովականներն անդրադարձ կատարեցին համավարակի հետեւանքով երկրում ստեղծված տնտեսական ծանր վիճակին եւ հավատավոր ժողովրդին օգնություն ցուցաբերելու ապագա ծրագրերին:

Ժողովն ամփոփվեց Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով: Հայոց Հովվապետն իր գնահատանքը բերեց ժողովականներին՝ օգտաշատ քննարկումների համար, որոնք պիտի նպաստեն Եկեղեցու առաքելության առավել արդյունավորմանը:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ՏԵՐՅԱՆԸ

Տերյանի ծննդյան 135-ամյակի եւ մահվան 100-րդ տարելիցի առիթով



Գործ՝ Ա. Բեքարյանի

Սկիզբը՝ թիվ 2–15

ԺԲ. Տերյան եւ Չարենց

Տերյանը նախկինում եղել էր ՀՅԴ անդամ, հետո անդամագրվեց սպեցիֆիկներին, այնուհետեւ կոմունիստական կուսակցությանը եւ ազգությունների խորհուրդում պաշտոնյա էր, անմիջական շփումների մեջ էր Լենինի, Ստալինի եւ մյուսների հետ: Եթե ապրեր, վստահորեն հրաժեշտ կտար մթնշաղի անուրջներին եւ նոր ժամանակների պահանջներին համապատասխան նոր պոեզիա կստեղծեր, մի բան, ինչի գաղափարախոսությունն արդեն իսկ կար նրա «Հայ գրականության գալիք օրը» զեկուցման մեջ, իսկ մարմնավորումը՝ վերջին տարիների բանաստեղծությունների: Դրանով իսկ կդառնար նոր ժամանակների գրական առաջնորդը: Այստեղ մի ծավալուն միջարկում:

Տերյանը խորհրդապաշտական գրականության, գեղագիտության եւ տեսության համակարգի մեջ էր: Բայց լինելով շրջահայաց եւ գրական զարգացումների հանդեպ զգայուն՝ ուներ իր գրական ժամանակի ամբողջական ընկալում եւ հետեւում էր նորություններին:

Կարդում էր ֆրոյդիստական գրականություն, անտարբեր չէր ապագայապաշտների գործունեության հանդեպ: Մի տեղ գրում է. «Իսկ ես կարդում էի Պշիբիշեւսկու «De profundis»-ը (III, 212): Ստանիսլավ Պշիբիշեւսկին (1868–1927) լեհ գրող էր, «De profundis» վեպը սիրային նամակներով ֆրոյդիստական հոգեվերլուծական գրականություն էր (Վ. Պարտիզունին տվել է խուսափողական եւ հեռու բացատրություն. «...ունի վեպ՝ «Երկրի որդիներ», բայց հարցնող լինի, ինչ կապ ունի մեկը մյուսի հետ): Այս գրողի վեպերը դպրոցական տարիքում Չարենցը եւս պիտի կարդար, արտացոլեր իր «Homo sapiens» չափածո նովելում, նաեւ մտապահեր, որ ավելի ուշ՝ 1927-ի առաջին օրերին, կնոջ մահվան անմիջական տպավորություններով բանտում գրեր «De profundis» պոեմն ու հետո այրեր:

Տերյանի աչքի առջեւ էին նաեւ ապագայապաշտները, որոնց հանդեսներից մեկին, ինչպես արդեն ակնարկել եմ, ներկա է եղել Պետրոգրադի «Թափառող շուն» սրճարանում: Այնպես որ, Տերյանը շարունակվում էր. մենք 1920-ականներին կունենայինք մի նոր Տերյան, եթե վաղաժամ մահը չկտրեր նրա կյանքի ուղին:

Այն, ինչ չհասցրեց անել Տերյանը, արեց Չարենցը: Նա եկավ տերյանական աշխարհից, մտավ հեղափոխական տարերքի մեջ, գրեց «Սոմա», «Ամբոխները խելագարված» պոեմները, «Ողջակիզվող կրակ» շարքը, հետո դրանց ավելացրեց այլեւայլ գործեր եւ հռչակվեց հեղափոխության բանաստեղծ: Ոգեւորության ալիքը բարձրացավ մինչեւ 1924 թվականը, հետո եկավ խաղաղ տեղատվությունը՝ մինչեւ «Էպիքական լուսաբաց» (1930), իսկ դրանից հետո Չարենցն արդեն բացահայտ ընդդիմություն էր, ընդ որում՝ ոչ թե միայնակ, այլ իր գրական խմբակով (Բակունց, Մահարի, Արմեն):

Եթե Տերյանն ապրեր, նա եւս դառնալու էր ընդդիմություն, հռչակվելու էր ժողովրդի թշնամի եւ կամ գնդակահարվելու էր, կամ անհիշատակ կորչելու էր աքսորավայրերում: Սա է նրանց քաղաքական գծի ընդհանրությունը: Հիմա անդրադառնամ մարդկային խառնվածքի եւ ստեղծագործական նկարագրի յուրահատկություններին:

Տերյանը խաղաղ նկարագիր էր, ձգտում էր խոսքի մեղմության, հանդարտ ներգործության: Չարենցը պայթուցիկ էր, նրա խոսքի ուժականությունը՝ էներգետիկան, շատ հզոր է: Նրանը ծայրահեղ սահմանն էր՝ խելագարություն, հրդեհ, զոհ, փոթորիկ, ուրագան…

Բոլոր բանաստեղծներն էլ ունեն իրենց անհատականության խորագույն գիտակցումը, իրենց նշանակության արժեքը: Չարենցն ինքն իրեն համարում էր իր ժողովրդի խորհրդանշաններից մեկը, ինչպես Արարատը, «Սասնա ծռեր» դյուցազներգությունը, Զվարթնոցը, մայրաքաղաք Անին, Մաշտոցը, Վարդան Մամիկոնյանը, Խորենացին, Նարեկացին, այդտեղից էլ իր անձի նշանակության շեշտադրումը Ձեր նշած եւ բազմաթիվ այլ պոեմներում ու բանաստեղծություններում: Այսինքն՝ իրենով Չարենցը ոչ թե իր անձն է մեծարում, այլ հայ ժողովրդի արթնացումը, բարձրացումը, զարգացումը, համաշխարհային քաղաքակրթության ոսկի երակը լինելու իրողությունը, հայոց հանճարի վառվող ուժը, մեծությունն ու ներկայանալիությունը:

Սա գրականության մեջ ընդունված գեղարվեստական հնար է, որ կիրառել են շատերը: Օրինակ՝ ամերիկյան գրականության հսկաներից Ուոլթ Ուիթմենն իր «Ինքներգանք» պոեմում իրենով փառաբանում է իր երկիր Ամերիկան:

Այս տեսակետից տարբեր են նաեւ Տերյանի ու Չարենցի հրաժեշտի խոսքերն աշխարհին: Տերյանի բանաստեղծությունը հիշեցիք: Իր մահվան գիտակցումն ուներ նաեւ Չարենցը: Նշանակում է՝ երկուսն էլ ապրել են կյանքին վաղաժամ հրաժեշտ տալու ողբերգությունը (միջանկյալ կարող ենք հիշել Դուրյանին ու Մեծարենցին): Իսկ այդ հրաժեշտը յուրաքանչյուրի հոգում տարբեր էր. Տերյանն աննկատ մահ էր երազում (մահն էլ կերազե՞ն)՝ ո՛չ ծաղիկ, ո՛չ խոսք, ո՛չ արցունք, լռությո՛ւն միմիայն: Չարենցն իր մահվամբ տեսնում էր մի ամբողջ քաղաքակրթության կործանումը: «Անվերնագիր» (15. XII. 1936) բանաստեղծությունն ավարտվում է այս տողով.

Այն, որ ես էի, որ իմն էր առաջ,
Արդեն չի հառնի եւ ոչ մի գրքում
Եվ ոչ մի գրքում՝ աշխարհում գրած,
Եվ ո՛չ մի գրքում, եւ ո՛չ մի գրքում...

Սրանից չորս օր առաջ (11. XII. 1936) իր մահը տեսել էր նաեւ այսպես.

Այլեւս ինչ մնաց քեզ՝ խնդրելու կյանքից,–
Օ՜, անհանգիստ իմ սիրտ ու անկարող...
Մ'խ, խոնջենքի միայն անեզրական կարոտ,–
Խաղաղություն անխոհ,– մահվան հանգիստ...

Շարունակությունը՝ էջ 7

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿԻ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ

Սկիզբը՝ թիվ 11–15

Մեր քննած բնագրում վկայված են նաեւ քառանդամ դարձվածքներ, որոնք գրաբարյան երկերում այնքան էլ հաճախ չեն կիրառվում: Դրանք հիմնականում *ի* նախդիրի կիրառությամբ են ստեղծված, ինչպես՝

դնել ուխտ ընդ մահու (332) – պատրաստ լինել զոհաբերության, մեռնելու,

ի կալանս կապանաց արկանել (130) – շղթայակապ անել,

կարծիս ի մտի դնել (360) – կարծել,

կտուրն ի միմեանց լինել (180) – իրարից անջատվել, երկպառակվել,

կուրծս առնել (182) – լավ, լրջորեն մտածել,

հարց եւ փորձ առնել (40) – հարցնել, հետաքրքրվել,

ձեռս ի գլուխ ելանել (356) – գլխին տալ, փոշմանել,

մարտիւ պատերազմի սրակոխ առնել (354) – պատերազմում սրահարել,

ջան ի վերայ դնել (94) – ջանալ, ջանք անել, ջանք թափել,

ջան ի մտի դնել (358) – ջանալ, ջանք անել, ջանք թափել,

տնակոտորութիւն եւ հրացանութիւնս զեղել (164) – ավերում եւ հրդեհներ սփռել եւ այլն:

Բերենք քառաբաղադրիչ դարձվածային միավորների կիրառության բնագրային ուշագրավ օրինակներ եւս: Մեր ընտրած այս հատվածներում վկայված են նաեւ ոճական հարուստ բնութագիր ունեցող տարբեր այլ ԴՄ-ներ.

«Բայց բնակիչք ամրոցին Քեղեայ իբրեւ լուան զգալուստ ոստիկանին եւ՝ ի մտի եդին զյոյժ մռմռումն սպառնութեան առ՝ ի նմանէն նոցա, զահի հարելք եւ ահիւ ըմբռնեալք եւ *կարծիս՝ ի մտի եդեալ* անհաստատ խորհրդով, թէ գուցէ մատնեսցի ամրոցն՝ ի ձեռս ոստիկանին եւ այնպէս անհնարին տանջանաց եւ մահու մատնեսցին» (360):

«Եւ վասն զի յետ ամաց բազմաց սպանաւ արքայն Լահ ոմն եկեալ յԱլանաց դրանէ եւ՝ *ի խնդիր ելեալ* գրով վկայիցն եւ գտեալ զնոսա՝ ի Զրաբաշխն կոչեցեալ լերին, եւ *հարց եւ փորձ առնեալ* զնոսա վասն առ՝ ի Քրիստոս հաւատոցն՝ սուր՝ ի վերայ եդեալ կոտորէ» (40):

«Վասն որոյ ապա Հասանն խոհական իմացուածիւ՝ *ուշ ի կուրծս արարեալ* եւ գիտացեալ ոչ այլ ինչ իւիք փրկիլ նոցա յայնմանէ՝ (որ *բացեալ երեւէր դուռն կորստեան*) եւ կազդուրեալ՝ *ի կամս երկնաւոր* այցելութեանն, խնդրէ յետ կար երդման յԱփշնէ, զի տացէ նմա զամրոցն եւ առ՝ ի նմանէ գտցէ *աներկիւղութիւն արեան* եւ ամենայն չար ամպրոպաց» (182):

«Իսկ իմ եկեալ առ մեծ թագաւորն Գագիկ, եւ նա ընդունէր ածէր եւ յանձանձէր զմեզ ամենայն հոգեւոր սիրոյ հարազատութեամբ եւ հաստատուն հավատու եւ աներկբայ յուսով, եւ աներկեւան սիրով պաշտպանեալ հանդերձ եղբարբն իւրով Գուրգենաւ՝ անկարօտ *զհարկաւոր պէտս* մարմնոյ *լցուցանէր*, եւ ապա զսովորական իմաստութիւնն *քաղցրացուցեալ* իւր աներկբայ *մտօք* յուսացուցանէր զմեզ, զի ոգւով չափ ջան՝*ի մտի եդեալ* հոգասցի վասն դարձի մերոյ՝ ի բնակութիւնս մեր. մանաւանդ եթէ վասն խաղաղութեան ամենայն աշխարհի եւ հաստատութեան սրբոյ եկեղեցեաց՝ որպէս եւ քրիստոնէից իսկ կարգք պահանջեն ամբողջ *զհաւատոցն սրբոց* պահել զօրութիւն. այլ այս երբ Տէր կամեսցի» (360):

Խաչիկ Բադիկյանը «Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները» աշխատության մեջ կատարել է ժամանակակից հայերենի իմաստայն, քերականական դասակարգում եւ կառուցվածքային վերլուծություն: Հեղինակն ուսումնասիրություն կատարել է համաժամանակայա մոտեցմամաբ, սակայն ըստ անհրաժեշտության՝ օգտվել է նաեւ միջին հայերենի եւ գրաբարի դարձվածքային միավորներից՝ օգտագործելով փաստական հարուստ նյութ: Հայերենի դարձվածքների վիճակագրական պատկերը նկարագրելիս Խ. Բադիկյանը նշում է. «Ինչքան ավելանում է դարձվածի բաղադրիչների քանակը, այնքան պակասում է նման կառույցների թիվը» (*Բադիկյան Խ., Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Եր., 1986, էջ 206*):



Խ. Բադիկյանի այս դիտարկումը մասամբ համադրելի է նաեւ Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց» երկի դարձվածային միավորների կառուցատիպերի վիճակագրական նկարագրին:

Դրասխանակերտցին գրաբարի իր փայլուն իմացությամբ եւ ստեղծարար մտքով ծնել է գրաբարի համար բացառիկ տեսակով եւ ոճական գեղեցկությամբ դարձվածքներ, որոնց բաղադրիչների թիվը գերազանցում է չորսը: Դրանք մեծ թիվ չեն կազմում, սակայն հարստացնում են հայերենի եզակի դարձվածքների շարքը: Ներկայացնենք բնագրային օրինակներ.

ա) հնգաբաղադրիչ դարձվածքներ.

Արժանի կալ յաթոռ սրբութեան (10) – սրբության աթոռին արժանի դառնալ, սրբացվել. «Չկնի յարադրելով զորդիս եւ զթոռունս նորա, որք արժանի գտան կալ յաթոռ սրբութեան նորա, այլեւ զայլ եւս զյաջորդս նոցունց մինչեւ ցայսօր ժամանակի, եւ որ ինչ՝ ի նովանէն կան յայլոց ոմանց յաւուրս նոցա գործեալ իրակութիւք»:

Մահ առ դուրս պատրաստ ունել/իմ (8) – մահը պատրաստ պահել, մահվանը մոտ լինել. «Եւ արդ մի՛ եւս ինձ այլ յիրս յառաջաբանութեանս եղիցի ծախել զժամանակս. վասն զի ծերութիւն ցաւագին՝ մահ առ դուրս պատրաստ ունի, եւ տագնապ տարակուսիցս հապճեպ տայ պատմել զանցս անցից աղետիցս եւ անհնարին խռովութեանց հասելոց կալելոց զմեզ»:

Ի գործ չարի մասանցն բերել (208) – չար գործերի մասնակցել. «Եւ յիւր կորստեան կեղծաւորեւթիւն բերեալ բանս ծածուկս ընդ թագաւորին Վրաց՝ հաստատէին սպանանել զՍմբատ, եւ փոխանակ նորա զնա կառուցանել հրամանատար Հայաստանեայցս, միայն թէ ընդ նոսա ի գործ չարի մասանցն բերեցի»:

Նուաճել կարգել ընդ իւրով ձեռամբ (28) – նվաճելով՝ ձեռքի տակ գցել, տիրանալ. «Այլ եւ սպարապետ եւ իշխան բիւրուց եւ հազարաց զնա կացուցանէր. յետ որոյ քաջապէս վանեալ զՅունականսն եւս՝ նուաճեալ կարգէ ընդ իւրով ձեռամբ զՊոնտոս եւ զԿեսարիեայ, որ կոչի Միժակ՝ հանդերձ շրջագայեալ գաւառաքն»:

բ) վեցաբաղադրիչ դարձվածքներ.

Հասանել ի կէտ վճարման ի կենացս (92) – վախճանվել, կյանքի վերջնակետին հասնել. «Բայց Համազասպայ յետ երից ամաց առնլոյ զպատիւ կուրապաղատութեանն ի կայսերէ՝ հասանէ ի նմա կէտ վճարնաբ ի կենացս, եւ վախճանեալ դնի ընդ հարս իւր»:

Ի խոյզ եւ ի խնդիր լինել (16) – պրպտել, որոնել. «Ապա ոմն յազգէ ասորի՝ Մար Աբաս Կատինայ անուն, հրամանաւ մերոյն Վաղարշակայ երթեալ ի դիւանս թագաւորացն Պարսից, որ ուշիմ եւ վարժ էր մտօք՝ քաղդէարէն եւ յունարէն դպրութեամբ, ի խոյզ եւ ի խնդիր եղեալ՝ գտանէ անդ մատեան մի վավերական, զոր հրամանաւ Աղէքսանդրի որդւոյ Նեքտանիբայ ի քաղդէացի գրոյ ի յոյն փոխարկեալ էր, որ թէպէտ զբազում ազգաց զրոյցս հարստապէս ի նմա ճոխացուցեալ էր»:

Շարունակությունը՝ էջ 7

Երեւանի պետական համալսարանի մասնակցությունը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին ռազմահայրենասիրական, զորահավաքային եւ թիկունքային աշխատանքներին

Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրվանից Երեւանի պետական համալսարանն իր ակտիվ մասնակցությունն ունեցավ ռազմահայրենասիրական, զորահավաքային եւ թիկունքային աշխատանքներին: Մեծ հայրենականի նախօրեին մայր կրթօջախի բանասիրական, պատմության, իրավաբանական, տնտեսագիտական, կենսաբանական, քիմիական, երկրաբանական, աշխարհագրական եւ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետներում սովորում էին 1461 ուսանող, 68 ասպիրանտ, դասավանդում էին 19 պրոֆեսոր, 53 դոցենտ, 94 ավագ դասախոս եւ 54 ասիստենտ: 1941 թ. համալսարանն ուներ 41 ամբիոն (*տե՛ս «Երեւանի համալսարան», 1985, 9 մայիսի, №17–18, էջ 1*):

Պատերազմի առաջին իսկ օրերից, այնուհետեւ ողջ ընթացքում վերոնշյալ ֆակուլտետներից հարյուրավոր համալսարանականներ մեկնեցին գործող բանակ, ռազմաճակատ: Համալսարանում պարբերաբար գումարվում էին նիստեր, ժողովներ, ցույցեր, որտեղ ռեկտորատի ներկայացուցիչները եւ դասախոսները, իրենց ելույթներում հիշելով հայ ժողովրդի անցած պատմական ուղին, նրա մղած ազգային-ազատագրական շարժումների հերոսական էջերը, հայրենասիրական բոցաշունչ կոչերով կամավոր զինվորագրվում էին հայրենիքի պաշտպանության սուրբ գործին՝ այն համարելով քաղաքացիական պարտականություն եւ ազգային արժանապատվության գործ:

Համալսարանի ավագագույն դասախոսներ Հրաչյա Աճառյանը, Արսեն Տերտերյանը եւ Հովհաննես Կարապետյանը 1941 թ. հուլիսի 3-ին «Սովետական Հայաստան» թերթում հանդես եկան հոդվածով, որտեղ գրում էին. «Գիտակցելով ոոպեի մեծությունն ու լրջությունը՝ մենք էլ, չնայած մեր ծերացած հասակին, պատրաստ ենք մեր կառավարության առաջին իսկ կոչին նետվել կռվի՝ ի սպաս դնելու մեր ուժերն ու գիտելիքները մեր լայնածավալ հայրենիքի համար» (*Երեւանի պետական համալսարանի պատմությունից, էջ 67*):

Պատերազմ մեկնեցին համալսարանի պարետն ու դռնապանը, ամբիոնի վարիչն ու դեկանը, դասախոսն ու ուսանողը, ասպիրանտն ու ռեկտորը: 1941–1945 թթ. գործող բանակում եղան համալսարանի արական սեռի բոլոր այն քաղաքացիները, որոնք պարտավոր էին լինել այնտեղ: Ռազմաճակատ մեկնեց նաեւ համալսարանի այն ժամանակվա ռեկտոր Գարեգին Պետրոսյանը: Նույն զորամասում՝ 408-րդ հայկական հրաձգային դիվիզիայում, իր ճակատային ռազմական ծառայությունն անցկացրեց համալսարանի դասախոս եւ հետագա տարիների ռեկտոր Մկրտիչ Ներսիսյանը: Երկուսն էլ զորացրվել են միայն ծանր վիրավորվելուց հետո (*տե՛ս Հ. Բարսեղյան, Երեւանի պետական համալսարանը 1941–1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում, «Հանդես Երեւանի համալսարանի», 1995, №2, էջ 16*):

Հայաստանը պատերազմի նախօրեին արդեն համատարած գրագիտության հանրապետություն էր եւ բանակ էր ուղարկում հիմնականում 18–40 տարեկան միջնակարգ եւ մասամբ բարձրագույն կրթություն ստացած քաղաքացիների: Ըստ էության՝ Հայրենական մեծ պատերազմը հայերի համար առավելապես մտավորականության պատերազմ էր: Այն ժամանակներում համալսարանը, բարձր մտավորականության եզակի կենտրոն լինելով, առաջին օրինակն էր ծառայում հայրենասիրական ու կառուցողական բոլոր ձեռնարկներում թե՛ պատերազմական, թե՛ հետպատերազմյան առաջին տասնամյակների ընթացքում:

Պատերազմի տարիներին կազմավորված հայկական ազգային զորամիավորների՝ 390-րդ, 89-րդ, 408-րդ, 409-րդ հրաձգային դիվիզիաների, եւ դեռեւս 1920–22 թթ. կազմավորված 76-րդ լեռնային հրաձգային դիվիզիայի, քաղաշխատողների, ինժեներական, համբարակային, քիմիական, կապի, մեխանիզացիոն եւ մյուս ծառայությունների միջին ու բարձր հրամկազմի մեջ ծանրակշիռ տեղ են ունեցել համալսարանի նախկին սաները:

Միայն 1941 թ. տարբեր ռազմաճակատներ են մեկնել 360-ից ավելի ուսանող եւ դասախոս, իսկ պատերազմի հետագա չորս տարվա ընթացքում համալսարանի ճակատից մեկնել է ավելի քան 509 մարդ: Նրանցից շուրջ 300-ը զոհվել են հանուն հայրենիքի խաղաղ ու անվրդով կյանքի: Ռազմաճակատ մեկնած 869 համալսարանականներից 213-ը կոմունիստներ էին, իսկ 628-ը՝ կոմերիտականներ (*տե՛ս «Երեւանի համալսարան», 1985, 9 մայիսի, №17–18, էջ 1*):

Շարունակությունը՝ էջ 8

«ՓՈՔՐ ՄԱՐԴՈՒ» ԴՐԱՄԱՆ ԵՐՈՒԽԱՆԻ ՆՈՎԵԼՆԵՐՈՒՄ

Երուխանի նովելների հերոսները մեծ մասամբ ծովի մարդիկ են: Նրանք աչք են բացել ծովափին, անհոգ օրերին զմայլվել նրանով: Ծովը գրողի նովելներում առանձնակի տեղ է գրավում: Սքանչելիքներով հարուստ բնության եւ ծովի գաղտնիքների մեջ է թափանցել նրա միտքը՝ որսալով անորսալին, սովորել զգալ ու մտածել այդ խորհուրդներով: Կյանքի գեղեցկության որոնումները նրան հասցնում են ծովի արկածային տարերքի ընկալումներին, տեսնելու բնության եւ մարդու գոյակցության ներդաշնակությունը:

Նար-Դոսի պես Երուխանն էլ պատկերում է նույն ժամանակի մեծ քաղաքների ծայրամասային թաղամասերում խավարի եւ աղքատության բեռի տակ կքած հայ մարդու անմիխիթար վիճակը: Երուխանի ինքնատիպ հերոսներն ընտելացել են ստեղծված իրավիճակին: Նրանք չեն վախենում թշվառությունից, ավելին՝ արհամարհում են այն. նրանք հոգեպես բարձր արժանիքներ ունեն: Եթե նրանք սիրում են, ապա այդ սերը մարդկայնորեն ուժեղ է ու անկեղծ, եթե ուրախանում են (զգացողության դրսեւորում, որ հազվադեպ է պատահում), ապա կարողանում են ողջ հոգով ուրախանալ:

Գրողը սրբազան երկյուղածությամբ է փայփայում այն ճշմարիտ հավատամքը, թե բոլոր հոգեւոր գեղեցկությունների միակ եւ անսպառ աղբյուրը «խոնարհ դասակարգն» է: Նրա նովելային աշխարհը գերազանցապես դժբախտ հերոսներով է բնակեցված: Այդ ամենը թերեւս պայմանավորված էր իրականության կենդանի պատկերագրումով: Նա իր նորավեպերի համար սյուժեներ էր ընտրում կենցաղից, իր տեսած կյանքից: Նրա նորավեպերի հաջողությունը իրականության ճշմարիտ վերարտադրության երուխանական մեկնության մեջ է: Հենց դրանում պետք է փնտրել Երուխան նորավիպագրի բերած նորությունն ու ստեղծագործական հմայքի գաղտնիքները: Գրողի համար խնդիր է դառնում իր դժբախտ հերոսների անհատականությունը ձուլվելը: Նա աստիճանաբար ձուլվում է իր հերոսի հոգեւոր ողբերգությանը՝ դուրս բերելով դրա կենսական պատճառները. «Հանկարծ սթափեցա հառաչանքե մը, սրտի անդունդներեն դուրս պոռթկացած ու իր հետ բերելով ավերակ, ջարդուփշուր սրտի մը սփոփանք»:

Անհատի հոգեկան հուզապրումներն ու գալարումների տագնապը անմիջապես կամրջում են հեղինակի եւ նրա հերոսի անձերը: Նա խորաթափանց հետազոտողի եւ հմուտ խորագետի նրբանկատությամբ քայլում է դեպի կյանքի հատակը նետված, հասարակությունից մեկուսացված հերոսը՝ սուզվելով նրա ներաշխարհի նուրբ ծալքերը: Մի քանի վրձնահարված, եւ ընթերցողի առջեւ է կանգնում ընդգծված բնավորությամբ եւ արտաքին նկարագրությամբ հերոսը՝ իր յուրօրինակ հոգեբանությամբ: Նորավիպագիրը հաջողությամբ ապրում եւ վերարտադրում է հերոսի ներքին հույզը, վիշտը, խոհն ու մորմոքը, նրա ներզգացումը, հոգու տագնապը: Երուխանի կերտած կերպարները տիպական են, պատկերները՝ տեսանելի: Այդ հերոսներին բնորոշ է կյանքի նկատմաբ չափավորության զգացողությունը: Շատ քչով բավարարվող այդ մարդիկ երբեմն իրենց կյանքը համարում են նաեւ «անամպ, խաղաղ ու շենշող», մաքառում են, տանջահար լինում, սակայն չեն դժգոհում. տրտնջում են հազվագյուտ: Նրանց ամենադաժան պայքարը մի կտոր հացի համար հաճախ իրենց իսկ կողմից դիտվում է որպես կյանքի զարգացման բնականոն ընթացք: Սակայն այդ հերոսները դժգոհում եւ հատկապես ըմբոստանում են, երբ ձախողվում կամ մերժվում են սիրո մեջ: Այս ֆոնին երեւան է գալիս կոնֆլիկտը: Անձնական անհաջողությունը բացում է հերոսի լեզուն, աշխարհի անարդարությունների դեմ նրա հոգում կուտակված մաղձը նոր միայն դուրս է ժայթքում: Սա, թերեւս, միակ իրավիճակն է, որը կարողանում է բացահայտել կերպարի ներաշխարհը, հոգում կուտակված թախիծը: Երուխանի հերոսների համար կյանքի մի ցնցումը հերիք է կործանվելու, դժվարությունների դեմ պայքարել չկարողանալու համար: Երուխանի՝ կյանքի հատակում հայտնված հերոսներից շատերը, որ գոյություն ունեն եւ միեւնույն ժամանակ գոյություն չունեն հասարակության համար, կարողանում են այդ նույն հասարակության միջից գտնել մեկին, որը դառնում է իրենց երազային աշխարհի միակ լուսավոր ու կարեւորագույն կետը, որ ստիպում է իրեն զգալ հասարակության լիիրավ անդամ, բայց եւ շատ հաճախ այդ լուսավոր կետը դառնում է նրանց համար դժոխքի ու կործանման ուղին լուսավորող կանթեղ:

Երուխանի հերոսները կյանքից օտարված, մեծ դժվարությամբ հանապազօրյա հաց վաստակող խոնարհ խավերի ներկայացուցիչներ են, որոնք հաճախ անգամ անուն չունեն, շրջապատողները նրանց կանչում են պապուկ, խամպուռ (կուզ), զանգակահար, որոնց հոգու խորքում թաքնված զգացմունքներ կան, անձնական գաղտնիքներ: Նրանք աղքատություն, որբություն, տառապանք տեսած մարդիկ են՝ հաճախ կոպիտ ու հանդուգն, բայց ավելի շատ երազկոտ, համբերող ու բարի:

Երուխանի նորավեպերից ամենաշատ քննարկվել եւ վերլուծվել է «Պապուկը»: Այն գրողի լավագույն նովելներից է, որն ընթերցողին երկար ժամանակ իր տպավորության տակ է պահում: Այս նորավեպում հանդիպում ենք նատուրալիստական զգվանք առաջացնող նկարագրությունների, որոնք ոչ այնքան մարդկանց են վերաբերում, որքան այն իրականությանը, որը ճզմում է մարդուն մինչեւ իսկ անուն չունենալու աստիճանի:

Ամեն օր եկեղեցու բակ էր գնում ցնցոտիապատ, խղճալի տեսքով պառավ մուրացիկը, նստում պատի տակ եւ սպասում ողորմության՝ նույնիսկ չնայելով ողորմություն տվողների կողմը: Բայց ահա մոտենում է մեկ ուրիշ ցնցոտիավոր մարդ, աճապարանքով ծոցից դուրս է բերում տասանոց մետաղադրամը, դնում պառավի առջեւի լաթի վրա: «Բայց Ո՜վ զարմանալյաց, ահա գլուխ վեր կառնե, աչվները, մարած ու մթին աչվները հանկարծուստ փայլակ մը, անակնկալ – պիտ մը շուրթերը կկծե, ձեռքը կերկարացնե աշխուժով դեպ այն անձը, որ տասնոց մը կդներ հոն: Հետո մարդը կհեռանա, կհեռանա ժպիտն ու զվարթ արտահայտությունը, մռայլ կպատե վերստին եւ գլուխը կիյնա կուրծքին վրա անշարժ ու տխրահակ՝ ինչպես էր առաջ:

Ով էր այդ մարդը» (*Հայ դասականների գրադարան, Երուխան, Եր., 1981, էջ 371*):

Շարունակությունը՝ էջ 6

Լուսավորչահիմն Մայր Աթոռի 125-րդ գահակալը

Սկիզբը՝ էջ 3

Ազգային գործիչը, որ մեծ տերությունների ղեկավարների մոտ ցանկանում էր պաշտպանել իր ժողովրդի արդար դատը, աստիճանաբար հանգում է այն գաղափարին, որ բոլոր մեծ տերություններն առաջնորդվում են սեփական շահերով, եւ փոքր ազգությունների ճակատագրերը նրանց ձեռքին մանրադրամի արժեք ունեն: Բեռլինից վերադարձած Խրիմյանը Կ. Պոլսի Գում-Գափուի Մայր տաճարում ժողովրդի հետ հանդիպման ժամանակ իր խոր հիասթափությունը թղթե եւ երկաթե շերեփով կաթսայից հարիսա վերցնելու այլաբանական տեսարանով է արտահայտում:

1880-ական թթ. Հայաստանի ազատագրության նպատակով Արեւմտյան Հայաստանի զանազան վայրերում՝ Վանում, Կարինում, Փոքր Հայքում ստեղծվում են գաղտնի կազմակերպություններ: Անմիջապես Խրիմյանի հսկողությամբ է ընթանում Վանի «Սեւ խաչ» գաղտնի կազմակերպության ծավալած գործունեությունը: Այդ իրադարձություններին տեղյակ Բ. Դուռն անցանկալի է համարում «անհանգիստ» հոգեւորականի ներկայությունը հայաշատ Վան-Վասպուրականում եւ 1884 թ. հատուկ հրահանգով նրան կանչում է Կ. Պոլիս: Վեց տարի Խրիմյանը գործում էր Կ. Պոլսում, ուր կրոնական ժողովի ատենապետն էր եւ Ազգային ժողովում ունեցած իր ելույթներով պատրիարքի եւ Ազգային ժողովի ուշադրությունն էր հրավիրում Արեւմտյան Հայաստանի վատթար կացության, կառավարության հայահալած քաղաքականության սաստկացման վրա: Վանում հիմնադրված (1885 թ.) Արմենական կուսակցության, որը հայտնի էր նաեւ երեք Մկրտիչների կուսակցություն (Մկրտիչ Խրիմյան, Մկրտիչ Փորթուգալյան, Մկրտիչ Ավետիսյան (Թերլեմեզյան)) անունով, շունչն ու հոգին էր Խրիմյան Հայրիկը: Ազգային նորաստեղծ կուսակցությունները, մասնավորապես «Հնչակ»-ն իր առաջին քայլերն էր կատարում Կ. Պոլսում: 1890 թ. Էրզրումի հունիսյան դեպքերի տհաճ տպավորությունը ցրելու եւ կառավարության ուշադրությունը հայկական բարենորոգումների վրա հրավիրելու միտումով հուլիսին Կ. Պոլսում կազմակերպվում է խաղաղ ցույց (Գում-Գափուի ցույց), որին սուլթանի հրամանով միջամտում է ոստիկանությունը: Ցույցի մասնակիցները կանգնում են դատարանի առաջ: Բ. Դուռը, որը Խրիմյանի մեջ տեսնում էր քաղաքականապես անբարեհույս հոգեւորականի, նրան աքսորում է Երուսաղեմ, ուր Ս. Հակոբի վանքի խցերից մեկում «արծվին փակել էին ճնճղուկի վանդակի մեջ»:

1892 թ. մայիսի 5-ին 72-ամյա Մկրտիչ Խրիմյանն ընտրվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս (1892–1907 թթ.): Նրա ընտրության հաստատման ցարական հրովարտակն ստացվեց միայն տասներեք ամիս անց: Պատճառն այն էր, որ սուլթանը չէր ցանկանում ըմբոստ հոգեւորականին ազատել թուրքական հպատակությունից եւ ցարին համոզում էր, թե Խրիմյանի ներկայությունը Ս. Էջմիածնում նոր խռովությունների առիթ է տալու: Աբդուլ Համիդն առաջարկում էր Նիկոլայ Երկրորդին կաթողիկոսական նոր ընտրություններ անցկացնել: Միայն Նիկոլայ Բ-ի առարկությամբ, թե Խրիմյանի ընտրությունը չվավերացնելը պատճառ կդառնա ավելի մեծ հուզումների, սուլթանը կատարեց ցարի պահանջը եւ Խրիմյանին ազատեց թուրքահպատակությունից: 1893 թ. սեպտեմբերի 26-ին՝ Վարագա Ս. Խաչի տոնի օրը, Էջմիածնի Մայր տաճարում Խրիմյան Հայրիկն օծվեց կաթողիկոս: Օրը մռայլ էր եւ ամպամած: Օծման արարողության ժամանակ փայլատակեց արեւը: Հանդիսությանը մասնակցող ժողովուրդը ցնծագին աղաղակներով թնդացրեց օդը՝ երեւույթը համարելով աստվածային նախանշան:

Արսեն Ղլտճյանը վկայում է. «Խրիմյան Հայրիկի կաթողիկոս ընտրվելուց հետո երիտասարդության մեջ ձգտում կար վանական-հոգեւորական կամ, ինչպես ասում էին, վարդապետ դառնալու: Դա համարվում էր ազգին ծառայելու մի ձեւ»:

Դրամատիկ ու փոթորկոտ էին նաեւ Խրիմյանի կաթողիկոսական տարիները: Ցարիզմը, գործակցած Բ. Դռան հետ, աշխատում էր խեղդել հայ ազգային-ազատագրական շարժումները: Կովկասի կառավարչապետ հայատյաց Գոլիցինի սադրանքով 80-ականների վերջերից սկսվեց հալածանք հայկական մշակութային օջախների, դպրոցների, ապա նաեւ Հայոց Եկեղեցու նկատմամբ: Պետությունից զուրկ հայ ժողովրդի համար Եկեղեցին կատարում էր ազգապահպան եւ ազգահավաք մեծ գործ: Նրա միջոցներով էին պահվում կրթական ու մշակութային հաստատությունները: 1903 թ. հունիսի 12-ին Նիկոլայ Երկրորդը ստորագրեց Հայոց Եկեղեցու շարժական եւ անշարժ գույքը բռնագրավելու հրամանը: Հայ հասարակական կազմակերպությունները, կուսակցությունները, ամբողջ հայ ժողովուրդը Ամենայն Հայոց Հայրիկի գլխավորությամբ բողոքի միահամուռ հուժկու ալիք բարձրացրին պետական մակարդակով կատարվող այդ մեծ անիրավության դեմ: Հայոց Հայրիկի նախաձեռնությամբ եւ գլխավորությամբ կազմվեցին բողոքի բազմաթիվ փաստաթղթեր՝ ուղղված Նիկոլայ Բ-ին: Ծերունազարդ Հայրիկը երիտասարդի ավյունով գլխավորեց համաժողովրդական այս պոռթկումը մինչեւ բաղձալի հաղթանակը՝ 1905 թ. օգոստոսը, երբ արտաքին եւ ներքին հանգամանքների ճնշման տակ ցարը ստորագրեց Հայոց եկեղեցու ունեցվածքը վերադարձնելու հրովարտակը:

Խրիմյանի կաթողիկոսության շրջանը գլխապտույտ իրադարձությունների ու սպառնալիքներով ընթացող դեպքերի եւ երեւույթների ժամանակաշրջան էր: Շրջահայաց ու հեռատես Խրիմյանը կարողացավ հնարավորինս քիչ վնասներով ու կորուստներով առաջնորդել իր հոգեւոր ենթակայության տակ գտնվող ժողովրդին: Նույնիսկ ժամանակ գտավ բարեկարգման ու ստեղծագործական աշխատանքներ իրագործելու համար: Մկրտիչ Ա Խրիմյանը վերանորոգել է տվել Ս. Հռիփսիմեի, Խոր Վիրապի, Հաղպատի, Սանահինի, Սեւանի վանքերը, աջակցել Զվարթնոցի պեղումներին, հիմնադրել Ամերիկայի առաջնորդական թեմը, կատարել վանական կյանքի կանոնական բարեփոխումներ: Նրա օրոք Ս. Էջմիածնում կառուցվել են նոր հյուրատուն, Սինոդի նոր շենք, թանգարան, նոր մատենադարան: Խրիմյան Հայրիկի գահակալության տարիներին օծվել են Բամբակաշատի Ս. Աստվածածին, Գավառի Ս. Աստվածածին, Գորիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները: Խրիմյանը թողել է գրական հարուստ ժառանգություն, որի մեջ առանձնահատուկ տեղ են գրավում գեղարվեստական, կրոնափիլիսոփայական, բարոյախրատական, մանկավարժական բնույթի ստեղծագործությունները՝ «Հրաւիրակ Արարատեան» (Կ. Պոլիս, 1850 թ.), «Հրաւիրակ երկրին Աւետեաց» (Կ. Պոլիս, 1851 թ.), «Մարգարիտ արքայութեան երկնից» (Կ. Պոլիս, 1866 թ.), «Յիսուսի վերջին շաբաթ եւ խաչի ճառ» (Կ. Պոլիս, 1876 թ.), «Ժամանակ եւ խորհուրդ իւր» (Կ. Պոլիս, 1876 թ.), «Վանգոյժ» (Կ. Պոլիս, 1877 թ.), «Հայգոյժ» (Կ. Պոլիս, 1871 թ.), «Թագավորաց ժողով» (Էջմիածին, 1909 թ.), «Դրախտի ընտանիք» (Կ. Պոլիս, 1876 թ.), «Սիրաք եւ Սամուել» (Կ. Պոլիս, 1878 թ.), «Պապիկ եւ թոռնիկ» (Էջմիածին, 1894 թ.) եւ այլն:

Խրիմյանի մեծությունն առաջին հերթին իր բարոյական նկարագրի, պարզ ու շիտակ, արդարամիտ ու հայասեր, ժողովրդասեր էության մեջ էր: Ուղենիշ ունենալով «ամեն ինչ ժողովրդի համար եւ ժողովրդի տեսակետով» նշանաբանը՝ նա արժանիորեն վաստակեց համայն հայության սիրելի ու պաշտելի գործչի եւ հոգեւոր առաջնորդի լուսապսակը:



Հարազատ ժողովրդի ճակատագրով մտահոգված Հայոց Հայրիկը նույնիսկ կյանքի վերջին օրերին չէր դադարում «Ես եմ հովիւն քաջ» լինելուց եւ իր պարտքը՝ այն է՝ «հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց իւրոց» կատարելուց: Մահվանից մի քանի ամիս առաջ նրա նախաձեռնությամբ կազմվեց հատուկ պատվիրակություն՝ Հաագայի (Լահեի) խաղաղության միջազգային երկրորդ կոնֆերանսին (1907 թ. մայիս–հոկտեմբեր) Հայկական հարցը ներկայացնելու համար: Նա դիմումներ հղեց ռուսական ցարին եւ Անգլիայի թագավորին:

Սեփական ժողովրդի վիշտ ու ցավով ապրող, նրա ճակատագրով մտահոգ Ամենայն Հայոց Հայրիկն իր հոգնաբեկ ու վշտակոծ հոգին ավանդեց 1907 թ. հոկտեմբերի 29-ին: Որբացավ հայ ժողովուրդը, քանզի կորցրեց իր պաշտելի Հայոց Հայրիկին: Մկրտիչ Պոտուրյանը «Բազմավեպ»-ում գրեց. «Դադրած է բաբախելէ սիրտը՝ որ սիրոյ արեւ մ'եղաւ: Ալ փակուած են այն աչքերը՝ որ գրեթէ դար մը հայութիւնը ողբացին: Որբ է Հայրենիքը, զրկված Հայրիկէն: Մասնական մահ մը սակայն, քանի որ համբաւը պիտի ապրի հայ գրական մատենագրութեան մէջ, եւ պիտի փայլի իր անունը՝ ազգային կրօնական պատմութեան մէջ»: Սրբավայել, հայապաշտ ու հայրենապաշտ Հայոց Հայրիկի մարմինը նոյեմբերի 5-ին ամփոփվեց Մայր տաճարի զանգակատան հարավարեւմտյան կողմում: Նրա գերեզմանն ուխտավայր-սրբավայր է յուրաքանչյուր ազգասեր ու հայրենասեր հայորդու համար:

Շարունակելի

Արման ՄԱԼՈՅԱՆ

«ՓՈՔՐ ՄԱՐԴՈՒ» ԴՐԱՄԱՆ ԵՐՈՒԽԱՆԻ ՆՈՎԵԼՆԵՐՈՒՄ

Սկիզբը՝ էջ 5

Ամեն առավոտ «այլանդակ սիլուետ մը» ժամը երկուսին անցնում է եկեղեցու փողոցով: Սապատավոր, յուղոտ ֆեսով, գունաթափ զգեստներով ծերուկ է, որի մասին ասում են, թե ցոփ ու շվայտ կյանք է ունեցել, մեծ հարստություն, որ մսխել է սիրային արկածների վրա: Բարեսիրտ մարդիկ նրան «մարդուկ» էին կանչում, չարաճճիները՝ «խամպուռ»:

Ամեն օր այդ խորհրդավոր գործողությունները շարունակվում էին ճշգրտորեն: Ձեռքը արագ խոթում էր ծոցը, հանում տասանոցը, դնում «անոր դողդողացող ձեռքին մեջ»: Տեսարանը սրտաշարժ էր:

Եվ ահա այսպես անցնում են օրերը, շարունակվում էին միօրինակ հանդիպումները, բայց եւ «մոլեգին բան մը կար այդ անծանոթ ծերունու անսովոր ընթացքին մեջ, մոլեգնություն՝ որ եւս առավել ահավոր կդառնար իր արտաքին հանդարտիկ երեւույթովը ու անզգամ դեմքովը. խուլ, կատաղի բան մը կը ելեւէջեր, կպտուտքեր անոր մեջ, չեմ գիտեր ինչ, այլանդակ սեր մը, ծերության վայրագ քմահաճույք մը, հեշտախտային այն մոլեգին գրգռումներե մին, զոր ո՛չ մեկ կերպով կարելի է բացահայտել» (*նույն տեղում, էջ 372*):

Այդ տարի ձմեռը սաստիկ ցուրտ էր: Ձյունածածկ փողոցով պապուկը դիմում էր դեպի նույն եկեղեցի՝ դողալով, սարսռալով ձգտելով իր տեղը: Կես ժամ հետո նույն տեղն էր գնում խամպուռը:

Վրա է հասնում անսպասելի շրջադարձը. ժամկոչներն ու քահանան սառած պապուկի դին «գերեզմանատուն վազեցուցին»: Ժամեր հետո մարդուկը եկավ, փնտրեց, չգտավ: Ու զարկված որսի պես «սրտակեղեք կաղկանձ մը արձակելով ինկավ...» (*նույն տեղում, էջ 372–373*):

Ամեն օր ավելի ու ավելի էր նիհարում ծերուկը, կուզը մեծանում էր: Սակայն առաջվա նման ամեն օր նույն ժամին մտնում էր եկեղեցի, ինչ-որ բան էր անում եւ իսկույն հեռանում:

«Հետաքրքիր եղա դիտել թշվառ մարդու այդ շարժումները: Ծածկվեցա անկյուն մը, ուսկից անկարելի էր երեւիլ, եւ տեսա ծերունին, որ գաղտնագողի ակնարկ մը նետելով չորս բոլորը, ծնրադրեց, գլուխն երկնցուց եւ սկսավ տենչանոք պատը լզվռտել»:

Կյանքի գորշ, ճղճիմ պատկերների մեջ իսկ երուխանը պահպանում է բանաստեղծական ընկալումը, որսում է հոգեհունց պատկերներ, որ վրիպում են սովորական աչքից: Նա չի անտեսում հասարակության կողմից մոռացվածներին, չնկատվողներին, հասարակության համար գոյություն չունեցողներին: Նա իր՝ գրողի զգայուն խառնվածքի եւ դիտողականության շնորհիվ կարողանում է նկատել այն, ինչը չի նկատում հասարակ մահկանացուն: Նա կարողանում է կյանքի հատակը նետված մարդկանց մեջ գտնել այնպիսի զգացմունքներ, ինչպիսիք հատուկ են բոլոր մարդկանց՝ անկախ սեռից, հասարակության մեջ նրանց զբաղեցրած դիրքից:

Անանա ԹՈՐՈՍՅԱՆ

ՅՆՈՐԿՎԱԾ ՏԵՐՅԱՆԸ

Սկիզբը՝ էջ 4

Չարենցի անձի պատմական նշանակության գիտակցման վերաբերյալ Ձեր հիշածներին ավելացնեմ եւս մի քանի տող «Նաիրի երկրից» (1920) պոեմից.

Ոտքերս ամուր հողի մեջ մխած,
Գլուխս աստղերում,
Անսասան, հաստատ կանգնած հողմային
Օրերի հրում –
Իմ հավերժատես, պայծառ աչքերով
Նայում եմ հեռուն:
<...> Ես– ես եմ նորից.–
Դարերից եկած անհուն մի պոետ –
Եղիշե Չարենց–
Նաիրի՛ երկի՛ր, քո երգիչը վառ,
Օրհներգում, պայծառ
Ու զավակը մեծ...
Ես – ես եմ նորից.–
Ոսկի երակը հնամյա ցեղիս,
Իմ ջլաբազուկ, հաղթ ժողովրդի
Օղակը վերջին:

Սա Չարենցի կողմից անմահության ընկալումն է, որպես առհավատչյա՝ աչքի առաջ ունենալով Երկիր Նաիրին:

Իսկ ի՞նչ է անմահությունը:

Անմահությունն սկսվում է յուրաքանչյուրից եւ սերունդների հիշողությամբ խորանում դեպի անցյալը՝ իրենից անմիջապես առաջ ծնողները, պապերը, ապուպապերը, նախնիները: Նույն կերպ միտքը շարժվում է իրենից հետո՝ զավակները, թոռները, ծոռները, կոռները…

Անմահությունը եւ նյութական է, եւ գիտակցական: Նյութական՝ արյան եւ սաղմնային (գենետիկ) հատկանիշների շարունակականությամբ: Գիտակցական՝ իրենից առաջ պատմությունն է, համաշխարհային քաղաքակրթության անցած ճանապարհը, իր ժամանակ՝ ստեղծվող կյանքը, իրենից հետո՝ շարունակվող կյանքը, որի ընթացքի տրամաբանությունը տեսնում է, կանխատեսում, գուշակում ու կռահում: Պայծառատեսները տեսնում են ապագան: Անմահությունը նաեւ հոգեւոր հասկացություն է: Անմահությանը պետք է հավատալ հենց այնպես, ինչպես հավատում են Աստծուն: Աստված անմահ է եւ հավերժական: Այդ անմահությունն ու հավերժությունը պայմանավորված են սերունդների հավաքական հիշողությամբ: Ուրեմն սերունդների հերթականությամբ ու հաջորդականությամբ անմահ է նաեւ մարդը:

Մարդը շրջապատված է բնության հավերժությամբ՝ Երկիր, Արեգակ, Լուսին, ցամաքներ եւ օվկիանոսներ: Հայ ժողովրդի համար հավերժության խորհրդանշան է Արարատը՝ որպես սուրբ սար, հետջրհեղեղյան աշխարհաստեղծման խորհրդանիշ: Այստեղից հայ բանաստեղծների, նաեւ Չարենցի հաճախակի դիմումը Արարատին: Արարատին նվիրված բանաստեղծություն ունի նաեւ Տերյանը:

Մարդկությունը փորձել է նաեւ մրցակցել բնության հետ՝ ստեղծելով հավերժության իր պատկերացումը մարմնավորող կառույցներ՝ բուրգեր, Թաջ Մահալը, Սֆինքսի արձանը: Մարդկությունը հավերժության հետ մրցակցել է նաեւ մտավոր այնպիսի բարձրագույն արժեքով, որպիսին Աստվածաշունչն է, եւ այն ամենը, ինչ ամբարված է սեպագրերում, պատկերագրերում, մեհենագրերում, արձանագրություններում, բանավոր հիշողության մեջ եւ գրքերում:

Ահա Չարենցն իրենով այս անմահությունն ու հավերժությունն է խորհրդանշում եւ ապրելու, գոյատեւելու երաշխիք տալիս 1915 թիվ եւ հետագա իրադարձություններ տեսած իր հիրավի բազմաչարչար ու մազապուրծ ժողովրդին:

Այնպես որ, նորից եմ կրկնում, պետք է ոչ թե գրողներին, այս դեպքում՝ Տերյանին ու Չարենցին հակադրել, այլ բացատրել նրանց առանձնահատկությունները: Եվ սա պետք է ընդհանուր ու միանշանակ սկզբունք լինի մարդաճանաչողության, արվեստի աշխարհի ներկայացուցիչներին գնահատելու հարցում:

Այսքանից հետո Ձեր իսկ հարցադրմանը պատասխանեմ՝ Տերյանի եւ Չարենցի հոգեւոր ուղղվածությունները տարբեր չեն, մեկը մյուսի շարունակությունն են: Տերյանը շարունակվեց, իր վերջին բանաստեղծություններով եկավ այնտեղ, որտեղ արդեն Չարենցն էր: Չարենցի շարունակությունն ու ավարտը նույնությամբ կարող էր կրկնել նաեւ Տերյանը: Ինչո՞ւ: Որովհետեւ պատմաքաղաքական ժամանակի առջեւ նրանք կանգնած էին նույն, գրեթե միեւնույն դիրքորոշմամբ: Սա արդեն իսկ բացառում է «միմյանց հակադիր» սխալ ձեւակերպումը:

Չարենցը «կյանքի, երկրային ձգտումների մարդ էր» եւ կարծում էր, որ կարելի է ստեղծել նոր հասարակարգ, այդ դիրքերից նաեւ բարեբանում էր նոր հասարակարգն ստեղծող գործիչներին, ինքն էլ կյանքի պայքարի մեջ անտարբեր չէր եւ ամեն կերպ փորձում էր հաստատել իր գրական սկզբունքները, իր գրական բարձր սկզբունքներն ընդդեմ պարզունակաների ու սխեմատիկների, բայց այդ պայքարը նրա համար դարձավ արյունոտ գրապայքար:

Ահա այս ամենով հանդերձ՝ Չարենցը նաեւ հոգեւոր բարձրագույն հաղորդակցման բանաստեղծ էր՝ ավելի խորացած 1935–1937 թթ. ստեղծագործությունների մեջ, որոնց բացառիկ արտահայտություններ են «Վերջին աղոթք», «Իմ լերան աղոթքը», «Ի խորոց սրտի խոսք ընդ Աստուծո» տետրապտիքոսը, «Նավզիկե» պոեմը, «Բալլադ սիրո» բանաստեղծությունը, «Էկլեզիաստես»-ը՝ իր «Գիրք ժողովողի»-ն...

Չարենցը բանաստեղծ էր ինչպես մեծ առօրյայի, հարաշարժ կյանքի, պատմության ու ժամանակի, նույնքան եւ ավելի՝ հավիտենության: Երկու արժեք՝ սեր եւ հայրենիք, սիրո եւ հայրենիքի առջեւ կանգնած մարդ ու բանաստեղծ եւ բարձր պոեզիա: Ինչ է սա, եթե ոչ հավիտենության ազդականչ: Այդ ազդականչը ժամանակների միջով ապագային, գալիքին, այսինքն՝ հավիտենությանն են փոխանցում ինչպես Տերյանը, այնպես եւ Չարենցը:

Շարունակելի



Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՐԱՄԽԱՆԱԿԵՐՏՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿԻ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ

Սկիզբը՝ էջ 4

Աշխատության մեջ գերակշռում են եռանդամ դարձվածքները, բայց դրանց քանակը համադրելի է երկանդամ միավորների քանակին: Ընդ որում՝ երկանդամ դարձվածքները հիմնականում կազմված են *առնել, լինել, ունել, դնել* բայերով եւ անուն կամ մակբայ խոսքի մասերի միջոցով, որոնք արտահայտում են բայ-ստորոգյալ եւ խնդիր կամ պարագա շարիյուսական կապը:

Անվանական դարձվածքների դեպքում հանդիպում են որոշիչ-որոշյալ կամ հատկացուցիչ-հատկացյալ կայուն փոխաբերական կապակցություններ: Եռանդամ դարձվածքները հիմնականում կազմված են *ի* նախդիրով եւ գոյականների թեքված ձեւերով: Ամփոփելով Հովհ. Դրասխանակերտցու աշխատության մեջ կիրառված դարձվածքների կառուցվածքային վերլուծությունը՝ կարող ենք ներկայացնել վիճակագրական հետեւյալ պատկերը. Դրասխանակերտցու կիրառած դարձվածքների զգալի մեծամասնությունն են կազմում եռաբաղադրիչ կապակցությունները (ըստ որում՝ դրանք բացառապես նախդրավոր կառույցներ են), որոնք կիրառության հաճախականությամբ գրեթե համադրելի են երկբաղադրիչ դարձվածային միավորների գործածությանը:

Ուշարժան է այն փաստը, որ Դրասխանակերտցու աշխատության մեջ բավականին շատ են քառաբաղադրիչ դարձվածային միավորները, որոնք այլ հեղինակների երկերում այնքան էլ տարածված չեն եւ դիպվածային են: Նման կառույցների առատությունը Դրասխանակերտցու լեզվի եւ ոճի յուրահատկությունն է: Գրաբարում հազվագյուտ են բազմաբաղադրիչ (հինգ եւ ավելի բաղադրիչ ունեցող) դարձվածային միավորները, այս օրինաչափությունն ակնհայտ նկատվում է նաեւ քննության ենթակա մեր մատենագիտական երկում: Դրասխանակերտցու կիրառած որոշ բազմաբաղադրիչ դարձվածքներ տեղ են գտել Ռ. Ղազարյանի հայտնի բառարանում, մի քանիսն էլ գտել ենք մենք, ուստի կարող ենք համարել նորագյուտ:

Մեր հետազոտությունը ցույց է տալիս, որ պատմաբան կաթողիկոսի կիրառած դարձվածքների մեծամասնությունը կազմված է բայ խոսքի մասին պատկանող գերադաս անդամից, թեեւ սակավաթիվ չեն նաեւ անվանական խոսքիմասային պատկանելությամբ գերադաս անդամով երկանդամ, եռանդամ եւ քառանդամ կազմությունները: Չորսից ավելի բաղադրիչ ունեցող ԴՄ-ներ գտել ենք, բայց դրանք հույժ սակավաթիվ են, չենք կարող համարել կիրառական կառուցատիպեր, դրանք ակնհայտ զուտ գրավոր խոսքում ստեղծված եւ գործածվող միավորներ են:

ՅՈՎՀԱՆՆԵՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԴՐԱՄԽԱՆԱԿԵՐՏՑՒՈՅ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ի լոյս ընծայեաց

ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆ

Տեսուչ Ղազարեանց Հոմարանի Ս. Բնեռնեան Ղեղուցոյ

ՍՐՈՍԿԱՎԱՐ.
Ի տպարանի Ա. Ղազարեանց Գրոցն
1853.

ՀԱՎԵԼՎԱԾ 2. Ռ. ՂԱԶԱՐՅԱՆԻ «ԳՐԱԲԱՐԻ ԴԱՐՁՈՒՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ»-ՈՒՄ ՉՎԿԱՅՎԱԾ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ

1. *ակամայ կամաւ* (12) – անկախ կամքից,
2. *ակամայ կամօք* (218) – հոգնակին է վերեւի դարձվածքի տարբերակը՝ կամա ակամա,
3. *առ ոտն հարկանել* (290) – ոտնահարել, արհամարհել,
4. *առնել զահ երկյուղի* (354) – սարսափահար լինել,
5. *առնուլ կին* (26) – ամուսնանալ,
6. *Աստուծոյ այր* (116) – հոգեւորական,
7. *Աստուծային գիր* (74) – Աստվածաշունչ,
8. *արեան ճապաղել* (116) – արնախեղդ անել,
9. *արեամբ մխել* (30) – արյամբ հատուցել,
10. *արեգակն արդարութեան* (264) – արդարության արեգակը,
11. *արժանի կալ յաթոռ սրբութեան* (8) – արժանի լինել սուրբ աթոռին, սրբացվել,
12. *արտաքոյ բանից թողուլ* (8) – չհիշատակել, անտես առնել,
13. *դէտակն ունել* (332) – ուշադիր սպասել, ակնկալել,
14. *դիմակ գոլ* (186) – հակառակվել, դիմադրել,
15. *դնել շուք* (26) – հովանի դառնալ,
16. *դնել ուխտ ընդմահու* (332) – պատրաստ լինել զոհաբերության, մեռնելու,
17. *դուռն բացել* (74) – հուսադրել,
18. *զաչս հարկանել* (186) — ուշադիր նայել,
19. *զբռամբ ածել* (20) — ձեռք գցել, տիրանալ,
20. *զշինութիւն աշխարհիս տնօրինել* (10) – տիրել աշխարհի շենությանը,
21. *զսիրտ կակղել* (170) – գութը շարժվել, սիրտը փափկել,
22. *ընդ կրունկն դառնալ* (100) – փախչել, նահանջել,
23. *մարտիրոսական հանդէս* (10) – սրբերի դաս,
24. *ի գլուխ ելանել* (186, 210) – ավարտվել, ամբողջանալ,
25. *ի դիմի հարկանել* (210) – ընդհարվել, դեմկանգնել,
26. *ի դիւի մատնել* (150) – դիվահարել, զայրացնել, կատաղեցնել,
27. *ի խոյ զեւի խնդիր լինել* (16) – պրպտել, որոնել,
28. *ի միտս զետեղել* (208) — մտքում ունենալ, մտապահել,
29. *ի միտս վառել* (254) — խանդավառվել,
30. *ի մտի առնուլ* (218) – մտադրվել,
31. *ի մտի դնել* (254) – մտադրվել,
32. *ի ներքս արկանել* (6) – խորամուխ լինել,
33. *լեզուս ածել* (150) – չարախոսել, բամբասել,
34. *խորհուրդս խոր թեւակոխել* (366) – մտածմունքների մեջ սուզվել, մտասույզ լինել,
35. *ծախել զժամանակս* (8) – ժամանակ վատնել,
36. *կեանս շնորհել* (36) – կյանք պարգեւել,
37. *կոշկոճամահ լինել* (354) – տանջամահ լինել,
38. *հանգչել ի Քրիստոս* (186) – մահանալ,
39. *հասանել ի կէտ վճարման ի կենացս* (92) – վախճանվել, կյանքի վերջնակետին հասնել,
40. *հատանել յոյս կենաց* (354) – կյանքի հույսը կտրել,
41. *հոգեւոր առագաստ* (150) – մայր եկեղեցի,
42. *հրաժարել ի կենաց* (92, 184) – մեռնել, վախճանավել,
43. *հօտ Տեառն* (170) — Աստծու հոտը, հավատացյալների հոտը,
44. *ձեռս լքանել* (290) – վհատվել, թեւաթափ լինել,
45. *մահ առ դուրս պատրաստ ունել*/իմ (8) – մահապարտ լինել,
46. *մատուցանել զլսելիս* (10) – հասկանալ, ընկալել,
47. *մարտիւ պատերազմի սրակոխ առնել* (354) – պատերազմելով սրահարել,
48. *մերկանալ մտօք* (364) – ձերբազատվել, մեկուսանալ,
49. *յական թօթափել* (164, 110) – աչքին երեւալ,
50. *յականջս հասուցանել* (34) – ականջին հասցնել, լսեցնել,
51. *յանձն առնուլ* (306) – պատրաստ լինել, ստանձնել,
52. *յաւտեանս յաւիտենից* (366) – հավերժաբար,
53. *նուաճել կարգել ընդ իւրով ձեռամբ* (28) – ձեռքի տակ գցել, նվաճել,
54. *շինանիստ շինուած* (8) – կատարյալ կառույց, շինություն,
55. *շոգմոգել շողոմութեամբ բանիւ* (254) – շողոքորթել դատարկախոսությամբ, կեղծավորաբար,
56. *ունել զաթոռն* (186) – գահակալել,
57. *պատրանաց պատրող* (364) – խաբեբա, հմուտ սրիկա,
58. *սէր դնել* (162) – միաբանություն հաստատել,
59. *սիրտ ճմլել* (188) – խղճահարվել,
60. *ստանալ ձեռն* (218) – ձեռք բերել,
61. *սրոյ ճարակ տալ* – (354) սրի քաշել,
62. *վառել ի զէնս* (170) – սպառազինվել,
63. *վարկանել անուն* (366) – հիշատակել,
64. *վճարել ի կենաց* (38) – կյանքից զրկել, սպանել,
65. *վրիպել ի խնդրոյ* (148) – սխալվել,
66. *տալ կերակուր սրոյն* (254) – սրի մատնել,
67. *տալ տեղի բանիցն* (190, 254) – համաձայնել,
68. *տնակոտորութիւն եւ հրացանութիւնս զեղել* (164) – ավերում եւ հրդեհներ սփռել:

Սամվել ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Երեւանի դեսական համալսարանի մասնակցությունը Հայրենական Մեծ դատերազմի տարիներին ռազմահայրենասիրական, զորահավաքային եւ թիկունքային աշխատանքներին

Սկիզբը՝ էջ 5

Մինչեւ Հայրենական մեծ պատերազմը համալսարանի շրջանավարտ բազմաթիվ մասնագետներ՝ ինժեներներ, մեխանիկներ, երկրաբաններ, քիմիկոսներ, ֆիզիկոսներ ու մաթեմատիկոսներ, ներգրավվել էին խորհրդային շինարարության բնագավառում՝ հասնելով լուրջ հաջողությունների: Նրանք ակտիվորեն շարունակեցին իրենց գործը նաեւ Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Համալսարանն անգնահատելի աշխատանք կատարեց նաեւ հայրենական գիտության զարգացման ուղղությամբ: Պատերազմի նախօրյակին համալսարանի ամբիոններում ու լաբորատորիաներում մշակվեցին բազմաթիվ գիտակրթական հիմնախնդիրներ, կատարվեցին արժեքավոր հայտնագործություններ, որոնք ներդրվեցին հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ: Համալսարանի քիմիական, ֆիզիկամաթեմատիկական, երկրագործական ֆակուլտետների ամբիոնները մշտական կապի մեջ են եղել հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվների հետ եւ օգնել նրանց արտադրական գործընթացների տեխնիկական հագեցվածությունը բարձրացնելու, ժողովրդական տնտեսության ռեսուրսների ճշգրիտ հաշվարկներ կատարելու եւ արտադրական առօրյայում բազմաթիվ խնդիրներ լուծելու հարցերում: Համալսարանի հայագիտական ամբիոնները գիտական խոր ուսումնասիրություններ կատարեցին հայ ժողովրդի պատմության, լեզվի եւ գրականության բնագավառներում:

Համալսարանի բազմաթիվ սաներ դարձան հանրապետության տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի զարգացման գործի կազմակերպիչներ, կուսակցական ու պետական ղեկավար աշխատողներ, իսկ նրա մեծ կոլեկտիվի անդամները՝ հանրապետության հասարակական կյանքի վերափոխման ակտիվ մասնակիցներ:

Երեւանի պետական համալսարանը հանրապետության հասարակական, քաղաքական ու տնտեսական կյանքի զարգացման գործում իր ակտիվ գործունեությունը շարունակեց նաեւ Հայրենական մեծ պատերազմի ժամանակ, երբ հայ ժողովուրդը ԽՍՀՄ մյուս ժողովուրդների հետ կենաց ու մահու պայքարի ելավ ֆաշիզմի դեմ:

Պատերազմի առաջին իսկ ամիսներից ռազմաճակատներում մարտական գործողությունների ընթացքն անբարենպաստ եղավ կարմիր բանակի համար: Չնայած պաշտպանական հերոսական մարտերին եւ բազում սխրանքներին՝ 1941 թ. հուլիսին խորհրդային զորքերը հարկադրված թողեցին Լատվիան, Լիտվիան, Բելառուսիան եւ Ուկրաինայի մեծ մասը: Ստեղծված դժվարին իրավիճակից դուրս գալու համար անհրաժեշտ էր ամբողջ երկիրը մեկ մարտական ճամբարի վերածել՝ կենտրոնացնելով բոլոր միջոցները:

«Ամեն ինչ ռազմաճակատի համար» նշանաբանով բանվորությունը թիկունքում կենտրոնացրեց աշխատանքային ողջ ներուժը՝ արդյունաբերությունը պատերազմի ժամանակաշրջանին համապատասխան վերակառուցելու համար: Գյուղացիությունը հայրենասիրական աշխատանք ծավալեց՝ գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ընդարձակելու համար: Մտավորականությունը ջանքեր գործադրեց գիտական նորարարություններ կատարելու եւ դրանք ժողովրդական տնտեսության մեջ ներդնելու ուղղությամբ:

1941 թ. հուլիսից ԽՍՀՄ բոլոր ազգային հանրապետություններում հայրենասիրական մեծ շարժում սկսվեց: Բանվորները, կոլտնտեսականներն ու մտավորականները, ամենուրեք հայրենիքի նկատմամբ ջերմ սիրով տոգորված, իրենց վճռական պատրաստակամությունը հայտնեցին՝ այն թշնամուց պաշտպանելու համար: Հարյուր հազարավոր կամավորներ համալրեցին աշխարհազորի շարքերը: Միայն Մոսկվայի աշխարհազորում հաշվվում էին 100 հազար, Լենինգրադի աշխարհազորում՝ 160 հազար բանվոր ու ծառայող (*տես Փ. Ենգոյան, Երեւանի համալսարանը Մեծ հայրենականի տարիներին, էջ 8*):

Մոսկվացիների ու լենինգրադցիների օրինակով պատերազմի առաջին իսկ օրերից կամավոր կարմիր բանակ մեկնեցին եւ աշխարհազոր մտան նաեւ Հայաստանի հազարավոր բանվորներ, կոլտնտեսականներ, մտավորականներ, բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող երիտասարդներ, կանայք ու աղջիկներ:

Պաշտպանության պետական կոմիտեի հրամանով 1941 թ. հուլիս–օգոստոս ամիսներին Հայաստանի տարածքում հանրապետության ուժերով ձեւավորվեց հայկական երեք դիվիզիա: Այդ դիվիզիաներում ղեկավար աշխատանքի նշանակվեցին կուսակցական եւ կոմերիտական հարյուրավոր պատասխանատու աշխատողներ: Պատերազմի առաջին երեք ամիսների ընթացքում դեսանտային զորամասերում ծառայելու համար հավաքագրվեցին ավելի քան 500 կամավոր ու 1400 կոմերիտական: Երեւանի Կիրովյան շրջանից, որտեղ զինվորական հաշվառման մեջ էր գտնվում ուսանող երիտասարդությունը, տարբեր ժամանակներում ռազմաճակատ մեկնեցին 2000 կոմերիտական, Լենինական քաղաքից (Գյումրի)՝ կոմերիտականների երկու երրորդը, Կիրովականից (Վանաձոր)՝ կեսից ավելին (*տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 3, թ. 1*):

Պատերազմի առաջին իսկ օրերից հայրենասիրական մեծ շարժում սկսվեց մայրաքաղաքի բարձրագույն ուսումնական հաստատություններում, այդ թվում՝ պետական համալսարանում:

«1941 թ. հունիսի 22-ի ժամը տասներկուսն էր,— գրում է պրոֆեսոր Փ. Ենգոյանը,— համալսարանի միջանցքներում ընդհանուր լռություն էր տիրում: Ուսանողները ֆակուլտետներին ու ամբիոններին կից կաբինետներում քննությունների էին պատրաստվում: Հիշում եմ այսօրվա նման՝ ակադեմիկոս Մառի անվան կաբինետում պատմության ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանողները կոնսուլտացիայի էին կանչվել: Այն անց էր կացնում պրոֆեսոր Վահան Ռշտունին, երբ մենք կլանված լսում էինք նրան, լացակումած ներս եկավ կաբինետի վարիչ Աստղիկ Խոնդկարյանը եւ հայտնեց, որ գիշերը ֆաշիստները ռմբակոծել են մեր քաղաքներն ու գյուղերը: Այս լուրի ազդեցության տակ բոլորս ոտքի կանգնեցինք եւ սպասեցինք պրոֆեսորի խոսքին: Նա, իր բնավորության համաձայն, հանգիստ դիմեց մեզ. «Ես բազմիցս անգամ լսել եմ ձեզանից ու ձեր ընկերներից, որ եթե հարկ լինի, դուք ձեր գրիչները կփոխարինեք զենքով եւ կպաշտպանեք սոցիալիստական հայրենիքը: Հասել է ժամը,— ասաց նա,— որ գործի վերածեք ձեր խոստումները»: Նրա պարտավորեցնող խոսքից հետո դուրս եկանք միջանցք: Մեկ-երկու րոպե անց անսովոր արագությամբ ուսանողները դուրս եկան նաեւ մյուս կաբինետներից: Ուսանողների հավաքը միջանցքում սովորականի նման չէր: Միմյանց նայելիս անմիջապես զգում էինք, որ բոլորս էլ փոխվել ենք, լրջացել, զգաստացել: Նույն օրը համալսարանի մեծ դահլիճում տեղի ունեցավ միտինգ: Դահլիճում հավաքվածներին հաղորդում արվեց ֆաշիստական Գերմանիայի ուխտադրուժ հարձակման, սահմանամերձ շրջաններում ֆաշիստների կատարած առաջին բարբարոսությունների, մեր քաղաքների ու գյուղերի ռմբակոծությունների մասին, մեր խնդիրների ու հետագա անելիքների մասին: Հուզումնալից էր, երբ կոլեկտիվի

անդամները՝ ուսանող թե դասախոս, հերթով մոտենալով ամբիոնին, հայրենասիրական ճառերով ու կոչերով հավաստիացրին կուսակցությանն ու կառավարությանը, որ արյան գնով կպաշտպանեն խորհրդային հայրենիքը, սոցիալիզմի նվաճումները, որոնց վրա ձեռք է բարձրացրել անարգ թշնամին: Առանձնապես տպավորիչ էին պատմաբան-դասախոսներ Ներսես Պողոսյանի, Սերոբ Պողոսյանի, Համո Հարությունյանի, համալսարանի ռեկտոր Գարեգին Պետրոսյանի, կուսկոմիտեի քարտուղար Դավիթ Դավթյանի եւ ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար Պետիկ Փիրումյանի ելույթները: Նրանք կոչ արեցին պաշտպանելու հայրենիքը այնպես, ինչպես պաշտպանել են մեր նախնիները դեռեւս շատ դարեր ու տարիներ առաջ գերմանական օրդենների, շվեդների, մոնղոլ-թաթարների, սելջուկների, արաբների, պարսկական խաների ու թուրքական փաշաների արշավանքների ժամանակ» (*Փ. Ենգոյան, Երեւանի համալսարանը Մեծ հայրենականի տարիներին, էջ 9–10*):

Շարունակելով իր խոսքը՝ Փ. Ենգոյանը հիշում է. «Դիմելով ուսանող երիտասարդությանը՝ պատմության ֆակուլտետի դեկան Ներսես Պողոսյանն ասաց. «Ձեր սրբազան պարտքն է մեզ հետ միասին պաշտպանել Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները, սոցիալիզմ կառուցող ավագ սերնդի աշխատանքի ու պայքարի արդյունքները: Հիշեք պատմության տված դասերը այն մասին, որ գաղտագողի հարձակվող թշնամին ավելի նենգ է ու կատաղի» (*նույն տեղում, էջ 10*):

Հունիսի 23-ին համալսարանի մի խումբ ուսանող երիտասարդներ, այդ թվում՝ աղջիկներ, գնացել են զինվորական կոմիսարիատ եւ հարցում արել, թե երբ կարող են մեկնել կարմիր բանակ կամ կարող են ցուցակագրվել կամավորական ջոկատներում: Մեկ օր անց պատմության, երկրաբանական, իրավաբանական ֆակուլտետների ուսանողներից բաղկացած մի խումբ ներկայացել է զինկոմիսարիատ եւ խնդրել զինկոմ գնդապետ Բիլբուլյանին իրենց ժամանակից շուտ ուղարկել բանակ: Կոմիսարը հատուկ գրությամբ շնորհակալություն է հայտնել համալսարանի ռեկտոր Գարեգին Պետրոսյանին ուսանողների կողմից ցուցաբերած հայրենասիրության համար եւ խնդրել է բացատրել նրանց, որ բանակ զորակոչելու հարցը կորոշի կոմիսարիատը՝ ըստ անհրաժեշտության (*տես նույն տեղում, էջ 11*):

«Արձակուրդը սկսվել էր,— գրում է Փ. Ենգոյանը,— բայց ուսանողները դեռ չէին ուզում մեկնել իրենց ծննդավայրերը: Հուլիսի սկզբին նրանց ներկայացուցիչները եղան կուսակցական կոմիտեում ու խնդրեցին զինվորական կոմիսարիատի միջոցով արտահերթ զորահավաք կազմակերպել եւ իրենց ուղարկել գործող բանակ: Կուսակցական կոմիտեն այդ առթիվ ստացավ շրջանային կոմիսարի համաձայնությունը, եւ համալսարանի ուսանողական առաջին կամավորական խումբը մայրաքաղաքի մյուս հայրենասերների հետ միասին մեկնեց կարմիր բանակ» (*նույն տեղում*):

1941 թ. հուլիսի 11-ը համալսարանի ուսանողների համար նշանավոր օր դարձավ: Այդ օրը նրանք Երեւանի երկաթուղային կայարանում հայ ժողովրդի հարյուրավոր այլ զավակների հետ բանակ ուղարկեցին իրենց ընկերներին, նրանց թվում՝ Պարույր Առաքելյանին, Դրաստամատ Ավագյանին, Մխիթար Մկրտչյանին, Վահրամ Պետրոսյանին, Հրաչիկ Պառավյանին, Վիկտոր Սարգսյանին, Վոլոդյա Սարգսյանին, Միշա Երիցյանին, Գարուշ Մնացականյանին, Գագիկ Մովսիսյանին, Բագրատ Նալբանդյանին (*նույն տեղում*):

Մեկնելուց առաջ պատմության ֆակուլտետի ուսանողներ Դրաստամատ Ավագյանը եւ Բարդուխ Գեւորգյանը, որոնք մինչ այդ ծառայել էին բանակում, իրենց ուսանող ընկերներին դիմեցին հետեւյալ խոսքով. «Ինչպես տեսնում եք, մենք արդեն զինվորագրվեցինք կարմիր բանակին: Հեռանալով ձեզանից՝ մենք ցանկանում ենք, որ հաղթանակը թշնամու դեմ տանենք առանց ձեզ, իսկ դուք ծառայեք հայրենիքին խաղաղ աշխատանքով» (*նույն տեղում, 11–12*):

Հաջորդ օրը՝ հուլիսի 12-ին, համալսարանում հրավիրվեց ուսանողական հավաք, որտեղ քննարկվում էր բերքահավաքի ժամանակ գյուղի աշխատավորությանն օգնելու հարցը: Հավաքում որոշում ընդունվեց մեկնել գյուղական շրջանները՝ ըստ բնակավայրերի, եւ փոխարինել բանակ մեկնած կոլտնտեսականներին: Մի քանի օրվա ընթացքում ուսանողները մեկնեցին հանրապետության կոլտնտեսություններն ու սովխոզները:

1941 թ. ամառային արձակուրդները սովորականի նման չանցան: Գրեթե նույն լարվածությամբ ամառային ամիսներին շարունակեցին աշխատել համալսարանի կուսակցական եւ վարչական անձնակազմը, ԼԿԵՄ եւ արհմիութենական կոմիտեները: Համալսարանի կուսակցական եւ կոմերիտական ակտիվիստները քաղաքից բացակայում էին միայն շրջանային կոմիտեի թույլտվությամբ, իսկ ամբիոնի վարիչները, դեկաններն ու ռեկտորատի աշխատողները՝ ռեկտորատի թույլտվությամբ:

Շարունակելի

Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ
Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստորագրված է տպագրության 28.08.2020 թ.
Տպաքանակը՝ 1175